



# ՈՍԿԵԱՆՏԵՆԻԿ



ԵՐԵՎԱՆ «ԾԱՂԻԿ» 1994



# ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿ

Հայոց տեսական գիտական ժեռարկ պահում  
և ուսում միջոցներում օգտագործության համար  
առաջարկ աշխատավայր է տեսական գիտության  
ու արդի հայության մասին, ուստի այս գրքում պահպանային  
տեսական գիտության մասին աշխատավայրը պատճենաբանության  
ու արդի հայության մասին աշխատավայրը պահպանային


Կազմեց

Արդա Պետրոսյանը

Հայոց պահպանային աշխատավայր

Հայոց պահպանային աշխատավայր

Հայոց պահպանային աշխատավայր



ԱՐԵՎԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՀՊԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐ

ԵՐԵՎԱՆ 1994

«Ծաղիկ»



Եթե Դուք մանկապարտեսի ավագ խմբի դաստիարակ եք, առաջին դասարանի դասվար կամ 6-8 տարեկան երեխայի ծնող, ապա «Ուսկեմատենիկով» կարող է դառնալ Ձեր լավ օգնականը:

Գրքույկը դասական հեղինակների ստեղծագործությունների՝ առած-ասացվածքների, հանելուկների, խաղերի ու երգերի ժողովածու է:

«Ուսկեմատենիկում» զետեղված նյութերի մեծագույն մասը բերանացի անելու համար է նախատեսված: Ինչպես աշխատել «Ուսկեմատենիկով», այս հարցի պատասխանը կզտներ «Գիրը ծնողների եւ ուսուցիչների համար» մեթոդական ուղեցույցում:


Ուրախ կլինենք, եթե օգնակար լինենք Ձեզ:

«Շաղիկ» հրատարակչություն

«ՄԽԻԹԱՐ ՄԵԲԱՏՏԱՑԻ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ



## ԾՈՒՂԹՈՒՂՈՒ...



## ԱՐՏՈՒՏԻԿ

Ժողովրդական

*Մշակումը՝ Հ. Թումանյանի*

Արտուտիկ,

Նախուն տոտիկ,

Իշնեն կալեր

Գողտիկ-մողտիկ,

Ըստին քարեր,

Ուտին կուտիկ

Կըծըլվըլան

Կըլթիկ-կըլթիկ:

Եղանակ առաջարկ

## ՄԵՊՈՒ

*Ա. Խնկոյյան*

Պըպպան, պըպպան,

Պըպպըպան,

Պստիկ մեղու տրպտրպան,

Դաշտ ու հովիտ կշրջես,

Բարձր սարեր կթռչես,

Սուսան ամբուլ կծծես

Ու ոտքերով թափամակ

Փոշի առած՝ տուն կգաս:

## ԱՔԱՂԱՋՆ ՈՒ ԿՏՈՒՐԵ

Ա.ԽՆՂՈՅԱՆ

Մի աքաղաղ  
Վարմրապեծիկ.  
Իր ոտները  
Երկար ու ձիզ.  
Կտրին տալով՝  
Վեր-վեր ձգվեց

Ու կարմանքով  
Բնչ հարց տվեց.  
- Էս ո՞նց է որ  
Ես զոռ տալիս.  
Էս կտուրը  
Փուլ չի գալիս:

## ՓԻՍՈՆ

Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

Փիսոն, փիսոն մլավան,  
Թավրիկ թողեց, փախավ Վան,  
Լեպոն թաթիսան, երկար պոչ,  
Բնչ որ ուզեց, ասին՝ ո՛չ  
Փիսոն գնաց գողեգող,  
Փորը դատարկ, սիրտը դող,  
Դու նշը մեկնեց կովկիթին,  
Շերեփն իջավ ճակատին:

## ԹԻՏԻԿԻ ՕՐՈՐՔԵ

Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

Կախված է ճյուղից ճոճը ծիտիկի.  
Փըշի՛, հովի՛կ, փըշի՛.  
Ճոճն օրորվի, տանի բերի.  
Նանի՛, ծիտի՛կ, նանի՛:  
  
Ծիտիկը անուշ երազ է տեսնում.  
Փըշի՛, հովի՛կ, փըշի՛.  
Ճոճն օրորվի, տանի բերի.  
Նանի՛, ծիտի՛կ, նանի՛:

Բայց տես, ծիտիկը քընից չըկարթնի.  
Վամա՛ց փըշի, կամա՛ց.  
Ճոճն էլ զգույշ տանի բերի.  
Նանի՛, ծիտի՛կ, նանի՛:

## ԾՈՒՆԵ

Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ.  
Ահա այսպիս  
Հաշում եմ ես.  
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ.  
Ու տունն այսպիս  
Պահում եմ ես:  
Թի գա մեկ մոտ  
Մի հին ծանոթ.  
Սոտն եմ վազում,  
Պոշըս շարժում:  
  
Բայց թե մի գող,  
Չար կամեցող  
Ուզի թաքուն  
Մտնի մեր սուն,  
Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ.  
Ահա այսպիս  
Հաշում եմ ես.  
Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ,  
Ու տունն այսպիս  
Պահում եմ ես:

## ԱՂՎԵՍՆ ԵԿԱՎ

Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ

Աղվեսն եկավ լանձիկ, լանձիկ,  
Ուներ ուներ կարճիկ, կարճիկ,  
Շատ կու սիրեր հալի քարճիկ,  
Վու՛յ, վու՛յ:

Աղվես պառկեց արտի տակին,  
Աշքը ձգեց չաղ հալ ձազին,  
Նետով կը տամ աշքի տակին,  
Որ մոտ չգա նա մեր բակին,  
Վու՛յ, վու՛յ:

## ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱԾԵ

Հ.Թումանյան

Փիսիկը նստել  
Մի մութ անկյունում.  
Ունքերը կիտել  
Ու լաց է լինում:  
Մոտիկ է գալիս  
Մի ուրիշ կատու.  
-Ի՞նչո՞ւ ես լալիս.  
Այ փիսո ջան, դու...  
-Հապա ի՞նչ անեմ,  
Որ լաց չըլինեմ.  
Գանգատ է անում  
Փիսոն տըխաղեմ:  
Են Համոն թարուն  
Մածունը կերավ,  
Գնաց տատի մոտ  
Ինձ վըրա դրավ:  
Հիմի տատիկի  
Ետեւից ընկած.  
Ինձ են ման գալի  
Մի-մի փետ առած  
Են բոթոք Սուրենն,  
Անոն ու Մոսոն:  
Ո՞ւր է, ասում են.  
Ո՞ւր է գող Փիսոն.  
Ա՞յս, թե մի գրտա՞նը.  
Մածուն ցույց կըտա՞նը...  
Էսպիս բան սարքեց  
Են Համոն իմ դեմ.  
Ի՞նչ անեմ հապա.  
Որ լաց չըլինեմ...  
Ու Փիսոն նրատել  
Մի մութ անկյունում.  
Ունքերը կիտել  
Ու լաց է լինում:

## ԵՒՏԸ ԵՎ ԹԱՉԵՆ

Մանկական խաղ

Դ.Աղայան

Ծիտը ծառին ծլվլում է.  
-Ծի՛կ, ծի՛կ, ծի՛կ.  
Բազեն զլիխն պտղտվում է.  
-Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ...  
Ծիտը լոեց, ծիտը վախեց.  
-Վա՛յ, վա՛յ, վա՛յ...  
Բազեն թըռո, թըռո, բազեն, թըռո.  
-Հա՛յ, հա՛յ, հա՛յ...  
Բազեն թոավ.  
Բազեն վախավ.  
Ի՞նչ լավ էլավ...  
-Հե՛-հե՛-հե՛...  
Ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,  
Պրտպրտուրիկ, չոլպըլտուրիկ.  
Դու լա՛վ պրծար չար բազեի.  
Սուր ճանկերից, հա՛-հա՛-հա՛...

## ԼՈՒՍԱՎԱՅՐԻ

Հ.Թումանյան

-Ծուղրուղո՛ւ.  
Արլորը զիլ կանչեց թառին.  
-Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ.  
Զարթնեց մթնում ծիտը ծառին:  
-Ծուղրուղո՛ւ.  
Խոսեց ծեգին երկրորդ բերան.  
-Հո-հո՛, հո-հո՛.  
Նախիրն արդեն հանդը տարան:  
-Ծուղրուղո՛ւ.  
Լույսը բացինց երրորդ կանչին.  
-Վու՛յ, վու՛յ, վու՛յ, վու՛յ.  
Նստեց նանք տիղի միջին:

## ԱՊԱՎՈՏՅ ԳՅՈՒՂՈՒՄ

Դ.Աղայան

Արեգակը դուրս է եկիլ  
Պապը ալով.  
Շողբը երդից ներս է ընկել  
Շողշողալով.  
Ծիտը ծառին կը չըշում է  
Ծըլվելալով.  
Չորումն առուն քը չըշըշում է  
Վըշվըշալով.  
Ծույլ տղայի քունն է տարել  
Խորմիալով.  
Տրեխները շունն է տարել  
Մըմբըալով:

## ՊՈՉԱՏ ԱՂՎԵՍԸ

Ա.Խնկոյան

Փախավ աղվեսը,  
Փախավ թակարդից.  
Բայց պոչի կեսը  
Թողեց նա ներսը:  
Այդպես պոշտա,  
Պոչից անշատ.  
Գնաց ասավ ընկերներին,  
- Այ ձեկ մատաղ, ես ձեր գերին,  
Գե՞ն զցեցեք ձեր պոչերը.  
Ինչո՞ւ են պետք այդ փրչերը:  
Իրանք զարդ չեն ու զարդարանք.  
Այլ մեր զլխին պատիժ, փորձանք.  
Գետնի ավել,  
Վակրի խափան.  
Մեկ անվային  
Ավելորդ բան:  
Այդտեղ մի ծեր զարպետ աղվես  
Ասավ նրան. «Ապրե՞ս, ապրե՞ս,  
Այ ծակամուտ թռոխ թռոք.  
Եղքան չեն տա խելքի գոռք.  
Բա բանի որ տեղն էր պոչդ.  
Ինչո՞ւ շարիր դու այդ կոչդ»:

## ԳՐԻՑ

Հ.Թումանյան

Ի՞նչ կը լինի, ասա՞ գրի՞չ  
Ենձ էլ սիրես գունե մի քիչ  
Ինչո՞ւ իմ միծ քարժ ձեռքին  
Գրում ես միշտ վարժ ու կարգին.  
Խոկ իմ ձեռքին խազմրպում ես  
Սև քեզ վատ բան ի՞նչ եմ արել:  
Եկ, խնդրում եմ՝ ինձ համար էլ  
Գրի ենպն արագ-արագ.  
Ենպն ուղիղ, սիրուն բարակ:  
Գրիչը լուս լըսում, լըսում.  
Ճըճըռում է ու խազմրպում.  
Բայց այս անզամ արդեն, կարծես.  
Փոքրիկ ծրաի ձանկերը պես:

## ԱՊԱՋԻՆ ՀՅՈՒՆԵ

Հ.Թումանյան

- Վա՞յ, մայրիկ ջան, տե՞ս,  
Բակն ու դուռը լի  
Ինչքան սպիտակ  
Թիթեռ է գալի...  
Էսքան շատ թիթեռ  
Չհմ տիտել ես դեռ:  
- ԶԵ՞ իմ անուշիկ,  
Թիթեռներ չեն էտ,  
Թիթեռներն անցան  
Շաղիկների հետ:  
Էտ ձյունն է գալիս,  
Փարիլն է ձյունի.  
Որ կարծես սպիտակ  
Թիթեռնիկ լինի:

## ՊԱՊՆ ՈՒ ՇԱԴԳԱՍԹ

Փոխադրությունը՝ Ա. ԽԱԿՈՂՅԱՆԻ

Դուն առաջ	Ծունք՝ թոռից,
Մի անգամ	Թոռը՝ տատից,
Դապր ցանեց	Տատը՝ պապից,
Մի շաղգամ:	Դապր՝ շաղգամից,
Հաղգամն աճեց,	Հա բաշեցին,
Մեծացավ,	Բաշրշեցին,
Դապր տեսավ՝	Հաղգամն հողից
Զարմացավ:	Չհանեցին:
Դապր քաջից	Ծունք կանչեց
Բաշրշեց,	Փիսոյին..
Հաղգամն հողից	Փիսոն՝ շնից,
Չհանեց:	Ծունք՝ թոռից,
Դապր կանչեց	Թոռը՝ տատից,
Տատիկին..	Տատը՝ պապից,
Տատը պատից,	Դապր՝ շաղգամից,
Դապր շաղգամից,	Հա բաշեցին,
Հա բաշեցին,	Բաշրշեցին..
Բաշրշեցին.	Հաղգամն հողից
Հաղգամն հողից	Չրիանեցին:
Չհանեցին:	Փիսոն կանչեց
Տատը կանչեց	Մըկնիկին..
Թոռնիկին..	Մուկը՝ փիսոյից,
Թոռը՝ տատից,	Փիսոն՝ շնից,
Տատը՝ պապից,	Ծունք՝ թոռից,
Դապր՝ շաղգամից,	Թոռը՝ տատից,
Հա բաշեցին,	Տատը՝ պապից,
Բաշրշեցին,	Դապր՝ շաղգամից,
Հաղգամն հողից	Որ բաշեցին,
Չհանեցին:	Բաշրշեցին..
Թոռը կանչեց	Հաղգամն հողից
Ծնիկին..	Հանեցին:

## ԹՁԵԶԻ ԴՐԱՋԱՑ

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

Վարպետ Բրգեպն ամոան մի օր  
Դրայրոց բացեց մեծ ծառի տակ  
Ու հավաքեց թիթեռ, ճանձ, բռ,  
Մըժեղ, մըրջուն, մըլակ, մոծակ...

- Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,  
Պիտի սովորեք, սովորեք անվիրք,  
Որ իմանաք ինչ է ձեզ պետք,  
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ:

Պիտի սովորեք, սովորեք էնքան,  
Մինչև դառնաք ինձ պես վարպետ:  
Դև նըստեցիք իմիմ հանդարտ,  
Ինչ որ կասմ՝ կըրկնեք ինձ հետ:

Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ,  
Գ. Գաղտիկուռ, Դ. Դրդում...  
Ել. դու մորե՞ն, դեսն ականջ դիր,  
Ի՞նչ ես Էդմիլ կըտըրտում:

Ե. Երիցուկ, Զ. Զանապան,  
Է. Էշիբրտուկ, Ը. Ընկույզ...  
Մի աղմբեք, հանաք հո չի,  
Օիթե՞ն, հանգի՞ստ, մոծակ, սո՞ւս:

Մի խառնըվեք, չիմ սիրում ես  
Էղպիս աղմուկ, աղաղակ:  
Զ. Զըրբընչուկ, Ժ. Ժախում,  
Ի. Խշովույտ, Լ. Լեղակ:

Խ. Խընձորուկ, Ծ. Ծիրան,  
Կ. Կըռոռուկ, Հ. Հաղարչ...  
- Տե՛ս, վարժապետ, ես մըլակին,  
Ինձ ասում է՝ սարի արչ:

- Այ տղա, Ել, չեն հայինիք:  
Տրկան իմար անառուն...  
Զ. Զըմերուկ, Դ. Ղանձլամեր,  
Ճ. Ճարճատուկ, Մ. Մատուք:

Դու, Ե՞յ ծըղրիդ, ո՞նց ես նրատել.  
Գըլուխդ՝ ես, մեջքըդ՝ դուրս:  
Յ. Յունապի, Ն. Նունուֆար.  
Ը. Շագանակ, Ո. Ողկույզ:

Վայ, ես ինչե՞ր կան դասերում.  
Ողկույզը ես շատ եմ սիրու  
- Իսկ ես կատամբ կուտե՞մ, կուտե՞մ...  
- Իսկ ես՝ ծիրան... - Իսկ ես՝ կուտեմ...

Ձեզ չեն հարցնում՝ ի՞նչ կուտեք դուք  
Քընաթաթախ՝ առտեհան:  
Զ. Զինարի, Պ. Պատաստուկ  
Զ. Զըրկոտեմ, Ռ. Ռեհան:

Ս. Սերկեւիլ, Վ. Վարդենի,  
Տ. Տերեփուկ, Յ. Յարի...  
Ո՞ւհ, մարդ բարից պիտի լինի,  
Զիր մեջ գրլուխ կըճարի:  
Փ. Փօրփըրուկ, Բ. Բարասոյ  
Օ. Օֆ, պըրձանը վերջապիտ...  
Դի գնացեք, վաղը կգաք  
Անգիր արած ջրի պիտի:-

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բռո,  
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ,  
Վարպիտ թըզեզն առառն էսպիս  
Դաս էր տալիս մի ծառի տակ:

## ՊՈՒՅՊՈՒՅ ՄՈՒԿԻՆ

Դ. Դեմիքրաճյան

Մի երկիր կա՝ Հնդստան,  
Մի մուկիկ կար՝ ճատճառտան,  
Հնդստանի անտառում,  
Կոկու ծառի ծակուռում:

Ապրում էր նա իր համար,  
Բարիքներում անհամար  
Ու մի օր լավ, մի օր վատ,  
Ուներ ապրուստ թիչ թե շատ:

Ապրում էր նա իր համար,  
Բարիքներում անհամար  
Ու մի օր լավ, մի օր վատ,  
Ուներ ապրուստ թիչ թե շատ:

Օրը մի ճանճ, մի միջատ,  
Մի ծնդ, արմատ, ցորնի հատ  
Ուտում էր ու թիֆ անում,  
Խաղում, ապրում իր բնում:

Իր անունը Պույպույ էր.  
Ազգանունը Ճատունի:  
Լացը՝ վայր-վայր, վույշ-վույշ էր,  
Երգը՝ տարայ-նայ-յ-նի՛ նի՛:

Էսպիս մուկիկն ապրում էր,  
Վակվելով վար ու վեր  
Ու մի օր էլ ծանր ու մեծ  
Թրեն-իրեն միտք արեց.

«Տունս կոկոս ծառի տակ,  
Բերան չունե՞մ, թե՝ ճաշակ.  
Ճանճ կերել եմ, ծնդ կերել,  
Տեսնեմ կոկոսի համն էլ»:

Այս ասելն էր, մեկ էլ, դո՞մի,  
Ծակից կոկոսն ինչպիս բոմբ  
Ընկավ նրա առաջին:-  
Կոկո՞ս, կաղին չէ չնչին:

Կաղնի տեսակ, սեխի չափ,  
Միջուկն անո՞ւշ, յուղալի՛.  
Բայց կեղեւն է միայն հստու,  
Սիա ինչն է ցավալի...»

Վրա ընկավ մուկիկը,  
Բացեց իր սուր ճանկերը,  
Կծեց, կծեց, կծոտեց,  
Բան դուրս չնկավ, չխաջողվեց:

Ու կոկոսի չորս կողմը  
Ման է զալիս Պույպույը:  
Կեղեւն հաստ է, ո՞նց անի,  
Ու սկսեց վույշ-վույշը:

«Այս ի՞նչ է, ի՞նչ կըլի.  
Տեսնեմ դրա համն էլի՛:  
Մի թիչ կոկոս, մի թիչ ջուր,  
Գոնս մի կում, մի պուճուր»

Դու մի ասի՝ ընկնելուց  
Ծակ էր բացվել կոկոսում,  
Էլ որ տեսավ, հիմի էլ  
Ծակից մտնել էր ուկում:

Բայց տեսեք ինչ պատահեց.  
Ծակն էր պատիկ, ինքը՝ մեծ:  
Ծակից ներս չի մտնում,  
Սովոր էլ ուշըն է գնում:

Լաց է լինում մուկիկը...  
Ո՞նց լաց չըլնի մուկիկը...  
Միջուն ուրիշ բան չի ուկում,  
Նայում է ու նվազում:

Էսպիս լացեց, սուզ արեց,  
Ենքան լացեց, սուզ արեց,  
Հետն էլ սովից լղարեց:

Որ լղարեց, բարակեց,  
Մեկ էլ, ըիը՝, ճանճի պես  
Ծակից մտավ, գնաց ներս:

Էս ի՞նչ էր, տո՛, ո՞նց եղավ,  
Էս ծակից ո՞նց ներս մտավ,  
Ո՞նց, այնայի՛ր, ես՝ մուկը,  
Ես՝ կոկոսն ու միջուկը:

Դե, թիֆ արա, օխայ-օխայ-յ,  
Դե, պար արի, տարայ-յ, նանա-  
Դե, միջուկը կե՛ր ու կրծի՛ր,  
Կե՛ր միջուկը, կյութը խմի՛ր:

Համ ուտում է, համ էլ պարում,  
Համ պարում է, համ էլ երգում,  
«Ծնկը Պույպույ, պարս՝ տույտույ,  
Էլ ի՞նչ վայ-վայ, էլ ի՞նչ վույշ-վույշ»

Էսպիս թոշում, ծափ էր տալիս,  
Պար էր զալիս, ունագի, յայլի.  
Գոռում էր, ջա՞ն, տարայ-նի-նի.  
Այլի քիֆը ինչպես կըլնի:

Էս որ էսպիս կերավ, մաքրեց,  
Սոազ փորք էր, հիմա տովեց.  
Տովեց, դարձավ խոշոր մի մուկ,  
Ընկավ կողքին, քնեց խորունկ:

Մեկ օր անցավ, եկավ նոր օր,  
Ե՞ն, մուկիվը վեր կացավ, որ  
Փուշ կոկոսի ծակից դուրս գա.  
Այս դուրսը գործ կա, տուն կա:

«Լավ էր, կերանք բավականին,  
Հիմա գնանք մենք բանին»:  
Հեշտ էր ասել... Ապա՝ փորձիր,  
Մի կոկոսի ծակից անցիր:

Սոտեցավ, որ ծակից դուրս գա,  
Պահո՞... Տեսավ ճամփա չկա,  
Բնը խոշոր, ծակը պուճուր...  
Այդ է՝ մնաց, բայց մնա ո՛ւր...

Լաց է լինում մուկիվը:  
Ո՞նց լաց շրլնի մուկիվը:  
Տուել է կոկոսում,  
Մնացել է նեղ փոսում:

Այս ի՞նչ բան ունեիր,  
Գայիր կոկոս ուտեիր,  
Չոռ ուտեիր, լավ չէ՞ր, հր՞..  
Յավ ուտեիր, լավ չէ՞ր, հր՞...  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, տո զահրումա՞ր,  
Դե լաց, մնա քեզ համար»:


Էսպիս լացեց մուկիվը,  
Էնքան լացեց մուկիվը.

Հետն էլ տովից լղարեց:  
Որ լղարեց, բարակեց,  
Մեն էլ, ըեթ, սուս ու փուս  
Ծակից նորից ելավ դուրս:

Վա՛հ, էս ինչ էր, էս ո՞նց եղավ,  
Բա էս ծակից ո՞նց դուրս եկավ.  
Ո՞նց... այ, նայի՞ր, էս ես՝ մուկը,  
Ե՞ն՝ կոկոսը, է՞ն՝ միջուկը:

Տեսա՞ր լավ բան, կեցցե՞ս Պույպույ,  
Տո՛, էլ ի՞նչ «վայ», էլ ի՞նչ «փույ-փույ».  
Դե, քեֆ արա, օխա՛յ, օխա՛յ,  
Դե, պա՛ր արի, տարայ-նի-նայ...

Համ թոշում է, համ պարում է,  
Համ երգում է, համ կպնչում է,  
- Զա՞ն, քեֆ արա, տարայ-նի-նի  
Այլեն քեֆը ինչպես կըլնի:



## ԵԽՈՒՄ Ե ՉԻ ԵԽՈՒՄ

### ԱՍԹՓՈՐԴՆԵՐ

Հ. Թումանյան

Արլորը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհը տնսնի: Վիզ զգեց, երկարացրեց, բայց բան չտեսավ. դիմացի սարը խանգարում էր:

- Թուչի՝ ախաղեր, կարելի է դու գիտենաս, թե սարի հտեւը ի՞նչ կա, - հարցրեց վերեւում պառկած շանը:

- Ես էլ չգիտեմ, - պատասխանեց քուչին:

- Հապա մինչեւ ե՞ր պիտի այսպիս մնանք, արի՝ գնանք տեսնենք՝ աշխարհումս ինչ կա ինչ չկա:

Տունն էլ համաձայնեց: Խոսքը մին արին ու փախան: Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունք պառկեց մի թփի տակ, իսկ արլորը բարձրացավ մոտիկ ծառին, քննցին: Լուսադիմին արլորը կանչեց՝ ծուղրուդու: Մի աղվես լսեց արլորի ձայնը:

- Վա՛հ, սա որտեղից դուրս եկավ, ա՛յ լավ նախաճաշիկ, մտածեց աղվեսն ու վազեց:

- Բարի՝ լույս, սանահեր արլոր: Ի՞նչ ես շինում ես կողմերը:

- Գնում ենք աշխարհ տեսնելու, - պատասխանեց արլորը:

- Օ՛, ինչ լավ բան եք մտածել, - խոսեց աղվեսը: - Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալի: Ինչ լավ էր՝ պատահեցինք: Դե՛, ցած արի, որ շուշանանք:

- Ես համաձայն եմ, - ասավ արլորը: - Մես թե ընկերս էլ համաձայն է, ցած գամ՝ գնանք:

- Որտե՞ղ է ընկերդ: - Են թփի տակին: «Մրա ընկերն էլ երեւի իր նման մի արլոր կլինի. Ես էլ իմ ձաշը», - մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ որ շունք դուրս եկավ, աղվեսը, պո՞ւկ, փախավ, ո՞նց փախավ:

- Կա՛ց, աղվես ախաղեր, մի՛ փառվի, մենք էլ ենք գալի. Եղապես ընկեր չի լինի, - ծառի գլխից ձայն էր տախս արլորը:

Խոր անտառում մի այծ է լինում:

Ունենում է մի գեղեցիկ ուլ: Ուլիկն ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է ու իրիկունը կուրծքը լիքը տուն է գալի: Տուն է գալի, դուռը զարկում ու մվկում, էսպիս կանչում.

Սեւուկ ուլիկ,

Սիրուն բալիկ,

Ման եմ եկել սարե սար,

Կաթն եմ բերել թեզ համար,

Դոնակը բաց ներս գամ ես,

Անուշ-անուշ ծիծ տամ թեզ:

Սեւուկ ուլիկ, Սիրուն բալիկ:

Ուլիկն խսկույն վեր է յաջում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալի սրան ու կրկին գնում արոտ: Ես բոլորը թարուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից ստաց գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում,

Սեւուկ ուլիկ,

Սիրուն բալիկ,

Ման եմ եկել սարե սար,

Կաթն եմ բերել թեզ համար,

Դոնակը բաց ներս գամ ես,

Անուշ-անուշ ծիծ տամ թեզ:

Սեւուկ ուլիկ, Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում: «Եղ ո՞վ ես դու, շեմ ճանաշում: Նա բաղցը ու բարակ ձայն ունի: Բու ձայնը կոչու է ու կոպիտ: Դուռը բաց չե՞մ անի... Գնա՛... Շեմ ուզում թեզ...» Ու գայլը հեռանում է, գնում: Գալիս է մայրը, դուռը ծնծում.

Սեւուկ ուլիկ,

Սիրուն բալիկ,

Ման եմ եկել սարե սար,

Կաթն եմ բերել թեզ համար,

Դոնակը բաց ներս գամ ես,

Անուշ-անուշ ծիծ տամ թեզ:

Սեւուկ ուլիկ, Սիրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորք պատմում: Գիտե՞ս, մայրիկ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մինը նկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սեւուկ ուլիկ:

Սիրուն բալիկ:

Ասում էր դուռը բաց արա: Ենպի՞ն հաստ ձայն ունե՞ր: Ենպի՞ն վախիցա՛, Ենպի՞ն վախիցա՛... Դուռը բաց շարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

- Պա՛, պա՛, պա՛, պա՛: Սեւուկ ջան, ինչ լավ է եղել, որ բաց չես արել, - ասավ վախիցած մայրը: Եղ գայլն է եղել, եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց շանես, ասա՛ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոպերով:

## ԱՆՀԱՊԹ ԱՔԼՈՐԸ

Հ. Թումանյան

Լինում է, չի լինում, մի արևոր է լինում:  
Էս արևորը բուջուշ անելիս ոսկի է գտնում:

Կտուրն է բարձրանում, ձեն է տալի.

- Ծուղրուդո՛, փող եմ գտե՛լ...  
Թագավորը լսում է, իր նապիր-վեպիրներին հրամայում է՝  
զնան խլեն բերին:

Նապիր-վեպիրը գնում են՝ խլում բերում:

Արլորը կանչում է.

- Ծուղրուդո՛, թագավորն ինձանով ապրե՛ց...  
Թագավորը ոսկին ետ է տալիս իր նապիր-վեպիրին, ասում է.  
- Ետ տարեր իրեն տվեր, թե չէ աշխարհովը մին կիսայտառի մեզ էղ անպիտանը...

Նապիր-վեպիրը ոսկին տանում են ետ տալիս արլորին:  
Արլորն էլ կտուրն է բարձրանում.  
- Ծուղրուդո՛, թագավորն ինձանից վախի՛ց...  
Թագավորը բարկանում է, իր նապիր-վեպիրին հրամայում է.  
- Գնացի՛ք, - ասում է, - բռնեցեր եղ սրիկային, գրուիր կտրեցեր, եփեցեր, բերեց ուտիմ, պրծնեմ դրանից:

Նապիր-վեպիրը գնում են արլորին բռնում, որ տանեն: Տանելիս կանչում է.

- Ծուղրուդո՛, թագավորն ինձ հյուր է կանչե՛լ...

Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալի.

- Ծուղրուդո՛, թագավորն ինձ տար-տար բաղնիք է դրե՛լ...

Եփում են բերում թագավորի առաջն են դնում, կանչում է.

- Թագավորի հետ սեղան եմ նստե՛լ, ծուղրուդո՛...

Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի: Կոկորդով գնալիս կանչում է.

- Նեղ-նեղ փողոցներով անց եմ կինում, ծուղրուդո՛...

Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենք կորում, իր նապիր-վեպիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի՝ զարկեն:

Նապիր-վեպիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են՝ մինը էս կողմը, մյուսը՝ էն:

Արլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի.

- Լույս աշխարհումն էի, մութ տեղն եմ զնկել, ծուղրուդո՛...

- Զարկեցի՛ք, - հրամայում է թագավորը:

Նապիր-վեպիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատռում:

Արլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում ձեն տալի.

- Ծուղրուդո՛...

## ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆԱ ԿՈՒՏԻ

Ռուսական ժողովրդական հեքիաթ

Թարգմանություն նր՝ Մ. Խերանյանի

Մի խրճիթում ապրում էին մուկիկը, ծիտիկը և հավիկը: Մի օր քուշ անելիս հավիկը մի հատիկ գտավ ու կանչեց.

- Հատիկ եմ գտե՛լ, հատիկ եմ գտել: Ո՞վ կտանի աղալու:

- Ես՝ չե, - ասաց մուկիկը:

- Ես էլ՝ չե, - ասաց ծիտիկը:

Ի՞նչ աներ հավիկը: Հատիկը շրալաց տարավ, աղաց:

- Այսուր ո՞վ տուն կտանի, - հարցրեց հավիկը:

- Ես՝ չե, - ասաց ծիտիկը:

- Ես էլ՝ չե, - ասաց մուկիկը:

Համիկը ալյուրը շալակեց, տուն տարավ:

- Ո՞վ խմոր կանի, - հարցրեց համիկը:
- Ես՝ չե, - ասաց մուկիկը:
- Ես էլ՝ չե, - ասաց ծիտիկը:

Համիկը խմոր հունցից:

- Թռնիքը ո՞վ կվառի, - հարցրեց համիկը:
- Ես՝ չե, - ասաց ծիտիկը:
- Ես էլ՝ չե, - ասաց մուկիկը:

Համիկը թռնիքը վառեց:

- Հայն ո՞վ կթխի, - հարցրեց համիկը:
- Ես՝ չե, - ասաց մուկիկը:
- Ես էլ՝ չե, - ասաց ծիտիկը:

Համիկը հայր թիսից, դրես սեղանին:

- Հայն ո՞վ կուտի, - հարցրեց համիկը:
- Ես, - գոչեց ծիտիկը և մոտեցավ սեղանին:
- Ես, - գոչեց մուկիկը և մոտեցավ սեղանին:

Համիկը նրանց սեղանից հեռացրեց և ինքը մենակ կերպ հացր:

## ՍՈՒՏԱՎԱՐ

Հ.Թումանյան

Լինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը իր երկրությ հայտնում է.

«Ով էնպիս սուտ ասի, որ ևս ասեմ՝ սուտ է, իմ թագավոր թյան կեսը կտամ նրան»:

Դալիս է մի հովիք: Ասում է.

- Թագավորն ապրած կենա, իմ երբ մի դագանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնրում աստղերը խառնում:

- Կպատահի, - պատախանում է թագավորը: - Նմ պապն էլ մի շիբուխ ուներ, մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկնում, արեգակից վառում:

Ստախոսը գործիք քրոբնով դուրս է գնում:

Դալիս է մի դերձակ: Ասում է.

- Ներողություն, թագավոր, և վաղ պիտի զայի, ուշացա երեկ շատ անձրեւ նկատ, կայծակները տրաքիցն, երկինքը պատուից, գնացել էի կարկատնու:

- Հա՛, լավ ևս արել, - ասում է թագավորը, - բայց լավ չեր

կարկատնու. Էս առավոտ մի թիշ անձրեւ թափինց:

Սա էլ է դուրս գնում:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կունատակին:

- Դո՞ւ ինչ ես ու զոհում, այ մարդ, - հարցնում է թագավորը:

- Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանին:

- Մի կոտ ոսկի\*, - զարմանում է թագավորը: - Առ' ու ես ասում, ես թիկ ոսկի չեմ պարտ:

- Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կնազ տուր:

- Չե՛, չե՛, ճշմարիտ ես ասում, - խոսքը փոխում է թագավորը:

- Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

## ԵՐԵՔ ԱՐՁԻ ՀԵՔԻԱԹԸ

Ռուսական ժողովրդական հեքիաթ

Փոխադրությունը՝ Հ.Թումանյանի

Մի աղջիկ է լինում: Մի անգամ էս աղջիկը անտառ է գնում: Անտառում մոլորվում է, ճամփա չի գտնում, գալիս է դեմ առնում մի տնակի:

Դուռը բաց է լինում: Նայում է, տեսնում տանը ոչ որ չկա:

Ներս է մտնում: Դու մի՛ ասա՝ էս տնակում երեք արջ են ապրում՝ հայրը, մայրը և իրենց քրթողը: Եղ ժամանակ գնացած են լինում անտառ՝ ման գալու: Տնակը ունենում է երկու սենյակ՝ մինը սեղանատուն, մյուսը՝ նշարան:

Էս աղջիկը սեղանատուն է մտնում, տեսնում սեղանի վրա դրած երեք աման ապուր: Առաջինը՝ հոր ամանը, մեծ է լինում, երկրորդը՝ մոր ամանը, միջակ, երրորդը՝ քրթողի ամանը, փորիկ: Ամեն մի ամանի մոտ էլ մի-մի գնալ է լինում՝ մեծ, միջակ ու փոքր:

Աղջիկը վերցնում է մեծ գնալը, ուտում մեծ ամանից, անհամ է լինում:

Հետո վերցնում է միջակ գնալը, ուտում միջակ ամանից, դուրս չի գալի:

Հետո վերցնում է փոքր գնալը, ուտում փոքր ամանից: Տեսնում է՝ փոքր ամանի ապուրը համուլ է:

## ՊՈՉԱՏ ԱԴՎԵՍԸ

Հ.Թումանյան

Ուկում է նստել՝ տեսնում է երեք աթոռ՝ մեկը մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր: Բարձրանում է մեծ աթոռին՝ ընկնում է: Նստում է միջակ աթոռին՝ անհարմար է: Նստում է փոքր աթոռին, քեզը գալիս է, էնքան լավն է լինում: Վերցնում է փոքր ամանը, դնում ծնկներին ու սկսում փոքր գդալով ուտել:

Ուտում է կշտանում ու սկսում աթոռով օրորմել: Աթոռը կոտրվում է, աղջիկը վեր է ընկնում:

Վեր է կենում, աթոռը բարձրացնում ու մտնում մյուս սենյակ:

Մյուս սենյակում երեք մահճակալ է լինում՝ մեկը՝ մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր:

Պատկում է մեծ մահճակալի վրա, տեսնում է շատ է լայն: Միջակի վրա է պառկում տեսնում է՝ շատ է բարձր: Փոքրի վրա պառկում, տեսնում է՝ հենց իրենն է որ կա, ու ընում է:

Արշերը բաղցած գալիս են, որ ճաշեն: Հայրը մտնում է իր ամանին, մտիկ անում ու զարդուրելի գոռում.

- Էս ո՞վ է կերել իմ ամանից:

Սայրը մտիկ է անում իր ամանին ու փնտինթում.

- Էս ո՞վ է կերել իմ ապուրը:

Հայրը նայում է իր աթոռին ու գոռում.

- Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:

Մերն է նայում իր աթոռին ու փնտինթում.

- Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:

Քորոքն է նայում իր կոտրած աթոռին ու գոմքում.

- Էս ո՞վ է նստելիմ աթոռին ու կոտրել:

Մտնում են մյուս սենյակը:

Հայրը նայում է իր մահճակալին ու գոռում.

- Էս ո՞վ է պառկել իմ անկողնուն ու տրորել:

Սայրը նայում է իր մահճակալին ու փնտինթում.

- Էս ո՞վ է պառկել իմ անկողնուն վրա ու տրորել:

Քորոքն է նայում իր անկողնուն ու գոմքում

- Էս ո՞վ է պառկել իմ անկողնուն:

Հանկարծ աղջկան նկատում է ու էնպես ճղողում, կարծես մորթում էին իրեն:

- Էս ո՞վ է... գտել եմ... երես բռնեցներ... վա՛յ... վա՛յ... բռնեցներ:

Եվ ուկում է աղջկան կծել: Աղջիկը վախից վեր է թռչում, աշքերը բաց անում, տեսնում՝ պառկած է իրենց տանը, իր ննջարանում: Ու էս բոլորը երակ է:

տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցիմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞ր տեղ էիր:

Աղջիկն ասում է.

- Դե գնա ուլունք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է շարչու մոտ:

- Զարչի, շարչի, ուլունք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցիմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞ր տեղ էիր:

Զարչին ասում է.

- Դե գնա ինձ համար ձու բեր:

Աղվեսը գնում է հալի մոտ:

- Հավիկ, հավիկ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ շարչուն տամ, շարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցիմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞ր տեղ էիր:

Հավն ասում է.

- Դե գնա ինձ համար կուտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի մոտ:

- Կալվոր, կալվոր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ձու տա, ձուն տանեմ շարչուն տամ, շարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցիմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ շասեն՝ պոչատ աղվես, ո՞ր տեղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է, մի բուռ կուտ է տալիս: Աղվեսը կուտը տանում է հալին, հավը ձու է տալի, ձուն տանում է շարչուն, շարչին ուլունք է տալի, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի, կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը չուր է տալի, չուրը տանում է արտին, արտը խոտ է տալի, խո-

տը տանում է կովին, կովը կաթ է տալի, կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչս տալիս է իրեն, կցում է, կցմցում, վագում է գնում, իր ընկերներին հասնում:

## ԹԻՏԸ

### Հ.Թումանյան

• Լինում է, չի լինում մի ծիտ:

Մի անգամ էս ծախ ուր փուշ է մտնում: Դիս է թօչում, դեն է թօչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թռնիրը վարի, հայ թխի: Ասում է.

- Նանի շան, նանի, ուրիս փուշը հանի, թռնիրդ վարի, ես է գնամ բուջուշ անեմ, զլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թռնիրը վառում:

Ծիտը գնում է, ես գալի, թե՝ փուշը ես տուր ինձ:

Պառավն ասում է.

- Փուշը թռնիրն եմ զցել:

Ծիտը կանգնում է, թե՝

- Եմ փուշը տուր, թե չէ դես թռչնմ, դեն թռչնմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչնմ:

Պառավը մի լոշ է տալի: Ծիտը լոշն առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուսում: Ասում է.

- Հովիվ ախագեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Այ լոշը ա՛ն, կաթնի մեջ բրոի, կե՛ր, ես էլ գնամ բուջուշ անեմ, զլուխս պահեմ:

Գնում է, ես գալի, թե՝ լոշս տուր:

Հովիվն ասում է.

- Կերա:

- Ձէ, - ասում է, - իմ լոշը տուր, թե չէ դես թռչնմ, դեն թռում, զանիկդ առնեմ, դուրս թռչնմ:

Հովիվը ճարահատած մի զառն է տալի: Առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի տեղ հարասնիք են անում, մասցու շունեն, որ մորթեն:

Ասում է, - Ի՞նչ եք մոլորել: Այ, իմ զառն ատեր, մորթեցեր, թեք արեք: Ես էլ գնամ բուջուշ անեմ, զլուխս պահեմ:

Գնում է, գալի, թե՝ իմ զառք տվեք:

Ասում են, - Մորթեն ենք կերեն, ո՞րտեղից տաեք:

Սոս կանգնում է, թե՝ չէ, իմ զառը տալիս եք տվեք, թե չէ,

դես թոշեմ, դեն թոշեմ, հարսին առնեմ, դուրս թոշեմ:

Ու հարսին առնում է թոշում:

Գնում է, գնում, գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով  
գնում է:

Ասում է. - Աշուղ ախապեր, առ էս հարսին պահի քեզ մոտ; Ես  
ել գնամ քուջուց անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գաղի աշուղի առաջը կտրում, թե՞ իմ հարսը  
ինձ տուր:

Աշուղը ասում է. - Հարսը գնաց իրենց տուն:

Սա թե՞ չէ, իմ հարսը տուր, թե՞ չէ՝ դես թոշեմ, դեն թոշեմ,  
սապիկդ առնեմ դուրս թոշեմ:

Աշուղը սապը տալիս է իրեն:

Սապն առնում է, ուսը գցում, թոշում, մի տեղ նստում է, սկ-  
սում է ածել ու ճրտվածալով երգել.

Ծընգը, մընգը.

Փուշիկ տվի, լոշիկ առա,

Լոշիկ տվի, գառնիկ առա,,

Գառնիկ տվի, հարսիկ առա,

Հարսիկ տվի, սապիկ առա,

Սապիկ առա, աշուղ դառա,

Ծընգը, մընգը.

Ծի՞վ ծի՞վ:

Մին էլ հանկարծ սապը վեր ընկավ շարդիկ, ծիտը թռավ  
գնաց, հերթաքն էլ վերջացավ:

## ԵՐԿԻՆՔԸ ՓՈՒԼ Է ԳԱՎԻՍ

Հ. Թումանյան

Լինում է, չի լինում՝ մի Ճստիկ-Ճուտիկ; Ես Ճստիկ-Ճուտի-  
կը մի օր ծածուկ մտնում է դրացու պարտեզը, որ քուջուց անի:  
Մեկ էլ հանկարծ թիֆ մի վարդ է պոկվում, ընկնում է պո-  
չին:

Ճստիկ-Ճուտիկը վախեցած դուրս է վախչում: Վապում է  
վապում, հասնում է Հավիկ-Մարիկին:

- Վա՛յ, Հավիկ-Մարիկ, - կանչում է հեռվից, - երկինքը փուլ  
է, գալիս:

- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, եղ որտեղի՞ց իմացար. - հարցնում է  
Հավիկ-Մարիկը:

- Օ՛, ես իմ աշքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ-

դեռ պոչիս ընկապ:

- Դե, արի վախչենք, - ասում է Հավիկ-Մարիկը:

Վապում են, վապում, հասնում են Բադիկ-Տատիկին:

- Վա՛յ, Բադիկ-Տատիկ, - կանչում է Հավիկ-Մարիկը, - եր-  
կինքը փուլ է գալիս:

- Ա՛ Հավիկ-Մարիկ, եղ որտեղի՞ց իմացար, - հարցնում է Բա-  
դիկ-Տատիկը:

- Ճստիկ-Ճուտիկն է ասում:

- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, եղ որտեղի՞ց իմացար:

- Օ՛, ես իմ աշքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ  
դեռ պոչիս ընկապ:

- Դե, եկեր վախչենք, - ասում է Բադիկ-Տատիկիը:

Վապում են, վապում, հասնում են Սագիկ-Խաթունին:

- Վա՛յ, Սագիկ-Խաթուն, - կանչում է Բադիկ-Տատիկը, - եր-  
կինքը փուլ է գալիս:

- Ա՛ Բադիկ-Տատիկ, եղ որտեղի՞ց իմացար, - հարցնում է Սա-  
գիկ-Խաթունը:

- Հավիկ-Մարիկն է ասում:

- Ա՛ Հավիկ-Մարիկ, եղ որտեղի՞ց իմացար:

- Ճստիկ-Ճուտիկն է ասում:

- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, եղ որտեղի՞ց իմացար:

- Օ՛, ես իմ աշքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ  
դեռ պոչիս ընկապ:

- Դե, եկեր վախչենք, - ասում է Սագիկ-Խաթունը:

Վապում են, վապում, հասնում են Հնդու-համին:

- Վա՛յ, Հնդու-Ձնդու, - կանչում է Սագիկ-Խաթունը, - եր-  
կինքը փուլ է գալիս:

- Ա՛ Սագիկ-Խաթուն, եղ որտեղի՞ց իմացար, - հարցնում է  
Հնդու-Ձնդուն:

- Բադիկ-Տատիկն է ասում:

- Ա՛ Բադիկ-Տատիկ, եղ որտեղի՞ց իմացար:

- Հավիկ-Մարիկն է ասում:

- Ա՛ Հավիկ-Մարիկ, եղ որտեղի՞ց իմացար:

- Ճստիկ-Ճուտիկն է ասում:

- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, եղ որտեղի՞ց իմացար:

- Օ՛, ես իմ աշքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ  
դեռ պոչիս ընկապ:

- Դե, եկեր վախչենք, - ասում է Հնդու-Ձնդուն:

Վապում են, վապում, հասնում են Աղա-Աղվեսին:

- Աղա-Աղվես, Աղա-Աղվես, - կանչում է Հնդու-Ձնդուն,  
երկինքը փուլ է գալիս:

-ԱՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եղ որտեղից իմացար. - հարցնում է Աղա-Աղվիսը:

- Սագիկ-Խաթունն է ասում:
- ԱՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եղ որտեղից իմացար:
- Բաղիկ-Տատիկն է ասում:
- ԱՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եղ որտեղից իմացար:
- Ճատիկ-Ճուտիկն է ասում:
- ԱՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եղ որտեղից իմացար:
- Օ՛, ես իմ աշբովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոշին ընկալի:

-Եղ ի՞նչ եք ասում. - ասում է Աղա-Աղվիսը. - եկեք ձեզ տանեմ իմ տունը, որ երկինքը ձեր գլխին փուլ չգտ:

Ճատիկ-Ճուտիկը, Հավիկ-Մարիկը, Բաղիկ-Տատիկը, Սագիկ-Խաթունը, Հադրությունը միասին ընկնում են Աղա-Աղվիսի հտեւից եւ մտնում են նրա որջը:

Մտնում են նրա որջը ու էն մտնելն էր, որ մտան, մինչեւ էօր էլ դեռ չեն դուրս եկել:

## ՀԱՉԱՐԱՆ ԹԼԹՈՒ

Հայկական ժողովրդական հերիաք

Փոխադրությունը՝ Գ. Նազինյանի

Լինում է, չի լինում՝ մի թագավոր. սա ունենում է երեք տղա: Օրերից մի օր թագավորը տղաներին ասում է. - Մեր տները հնացել են, բերեք նորոգենք:

Տղաները քանդում են տները, նորից շինում:

Թագավորը ժողովրդին հավարում է, պալատները ցույց տայիս, հարցնում. - Լավ ե՞նք շինել:

Սարդիկ էս ու էն կողմից ասում են. - Շատ լավ են, դրանց նմանը չկա:

Մի պառավ գալիս է ասում. - Թագավորն ապրած կենա, լավ եք շինել, համա մի բան պակաս է:

Պառավը որ ասում է «Մի բան պակաս է», թագավորը երա-մայում է. - Քանդեցեք, նորը շինեցեք:

Եղ տները քանդում են: Նորից են շինում ուրիշ տեսակ. դրանից ավելի լավը:

Ժողովրդին հավարում է, հարց ու փորձ անում՝ հավանում են:

Բայց էլի էն պառավը գալիս է, ասում. - Շատ լավ է շին-

ված, համա մի բան պակաս է:

Թագավորը էլի բանդել է տալիս, ասում. - Են որ եղածի է, են տեսակ շինեցեք, որ պակասություն չունենա:

Թագավորը երրորդ անգամ պալատները շինել է տալիս՝ մարմար քարերով, ամեն սարք ու կարգը տեղը, մի կարմանալու բան: Իր երկրում ինչքան մարդ կար, հավաքվում են, նայում, հիանում:

Պառավը գալիս է, ասում. - Թագավորն ապրած կենա, էլի մի բան պակաս է: Սրա միջին Հապարան բլրուլը պետք է ըլի. որ հապար տեսակ ծլվլա ու երգի, խաղ ասի, խոսի, էն ժամանակ քո թեփին թեֆ չի հասնի:

Թագավորը առավոտը իր նապիր-վեպիրին կանչում է, երամայում. - Գնացեք Հապարան բլրուլը բերեք:

Նապիր-վեպիրն ասում են. - Թագավորն ապրած կենա, մենք ո՛չ Հապարան բլրուլ լսել ենք, ո՛չ էլ տեսել, որտեղից գնանք բերենք:

Թագավորի երեք տղաներն առաջ են գալիս, ասում. - Այ հեր, մենք կզնանք Հապարան բլրուլը կրերենք:

Տղերը ճամփա են ընկնում: Շատ են գնում, թե թիչ, շատ որ թիշը իրենը գիտեն, գնում են մի այգեպանի են պատահում: Դրա այգու կողքից երեք ճամփա էր գնում:

Այգեպանին հարցնում են. - Էս ճամփիքը ո՞ւր են տանում: Ասում է. - Վերինը գնում է Բարի, միջնը գնում է Շարի, էս ներքին ճամփան էլ Գնացող-ես շղարձողինն է:

Փոքր եղբայրը կարգադրում է, որ մեծ եղբայրը վերի ճամփով գնա, միջնեկը՝ միջին ճամփով, իսկ ինքը ներքին ճամփան է ընտրում:

Եղբայրներին ասում է. - Ախաբերտինը, գնում ենք, համա որս որ շուտ գանք, էստեղ՝ էս բաղմանչու մոտ կսպասենք, որ երես էլ միատեղ վեր կենանք, ետ գանք մեր տոտ ն:

Էտեղ բաժանվում են, ամեն մինք մի ճամփով գնում է: Մեծ եղբայրը գնում է դուրս գալիս մի քաղաք, միջնեկ եղբայրն էլ մի ուրիշ քաղաք, ինքն էլ Գնացող-ես շղարձողի ճամփան բրոնած գնում է, հա՛ գնում:

Շատ է գնում, թե՝ թիչ, ինքը գիտի, գնում է տեսնում մի Ծերունի մի մեծ պալատի դռանը նատած: Բարեւ է տալիս, անց կենում: Ծերունին պատասխան չի տալիս: Եղ տղան էլ նրա վրա իսկի ուշը չի դարձնում, անց է կենում, գնում:

Ծերունին նոր նրա հտեւից ձեն է տալիս. - Այ տղա, նոր արի:

Գալիս է: Ծերունին հարցնում է. - Եղ ո՞ւր նա գնում:

- Գնում եմ Հապարան բլրուլը բերեմ:

- Հապարան բլրուլի պահապանը ես եմ: Տեսնում եմ Գնացող-եմ շդարձողի ճամփան, ինչքան մարդ էս ճամփովը եկել է՝ ետ չի դարձել, բոլորին վնասն եմ: Համա թեզ շատ հավանցի, պիտք է օգնեմ: Լավ ականջ դիր, ինչ որ կասնմ՝ չըլնեմ-չիմանամ խոսքից դուրս գաս: Առ էս թեշա-բյուլլահը: Որ գնադ Հապարան բլրուլի պալատը հասնեմ, էս թեշա-բյուլլահը կդնեմ գլխիդ՝ ել թեզ ոչ որ չի տեսնի: Տուն կմտնեմ, Հապարան բլրուլը կվերցնեմ, կրերեմ, համա ուրիշ բանի ձեռ չտաս:

Տղան գնում է հասնում թագավորի պալատը, թեշա-բյուլլահը դնում է գլխին, տուն մտնում ու մի պիտիճախում կանգնում: Թագավորը գալիս է պալատական ներով, իրիկնահաց են բերում, սեղան բացում, ուտում-խմում:

Տղա ու աղջիկ իրար են անցնում, համ տղաներն են սպասարկում, համ աղջիկները: Հետո աղախինները թագավորին իր տեղում պատկենում են, իրենք վեր կենում, գնում:

Անցուդարձը որ հանդարտվում է, են տղան տեսնում է, որ իրեն մի պապուն Խանչալ պատիցը կախ արած, վերցնում է կապում գոտուց: Հետո թագավորի ոսկի Զիբուխն է վերցնում, դնում ծոցը: Մոտինում է ընած թագավորին, տեսնում է սարի Տերողորմեն կողքին ընկած, են էլ է վերցնում, դնում ծերը: Հետո Հապարան բլրուլը վերցնում ու ճամփա է ընկնում: Գալիս հասնում է են Ծերունուն:

Տղան Ծերունուն հարցնում է: - Պատճառն ի՞նչ էր, որ դու էս ճամփով կեղոներին բալորին քո ձեռով կորցրել ես, իսկ ինձ վնաս չտվիր, դեռ ելա ամեն բան էլ սովորեցրի:

Ծերունին ասում է: - Դու որ նկար աներկյուղ «քարե» տվիր, անց կացար, իմ թիֆն էկավ, տեսա, որ դու սրտով տղա ես, դրա համար ել թեզ ճամփա ցույց տվի ու ամեն բան սովորեցրի:

Հետո տղային հարցնում է: - Հո ուրիշ բան չվերցրի՞ր:

Տղան ասում է: - Չե՛, մենակ Հապարան բլրուլն եմ բերել, մին էլ քո տված թեշա-բյուլլահը: Ա՛ռ, ախապեր, քո թեշա-բյուլլահը, շատ շնորհակալ եմ, որ դու ինձ ես մեծ լավությունն արիր:

Տղան Ծերունուն ձեռքը համբուրում է, «մնաս քարով» ասում, Հապարան բլրուլը վերցնում է ու ճամփա ընկնում:

Գալիս է հասնում այգեպանի մոտ, հարցնում է: - Ա՛յ այգեպան, իմ ախապորտանցից եկող չելա՞վ:

Ասում է: - Չե՛:

Տղան ասում է: - Թեո՞ի, էս Խանչալը թեզ նվեր, վիետ կկտ-

րես: Էս Հապարան բլրուլն էլ կպահես, ես գնում եմ ախապորտանցս գտնելու, մինչի իմ ետ գալը Հապարան բլրուլը թեզ ամանաթ:

Տղան միջի ճամփան բռնում է ու գնում: Գնում հասնում է մի քաղաք, տեսնում է միջնեկ եղբայրը մի փաղան շալակին համբալություն է անում: Մի ծանր պարկի տակ տնքալով, չորթն-պոկին անելով տանում է:

Եղբորն ասում է: - Այ տղա, եղ ի՞նչ բանի ես թագավորի կարողությունը հատացրել, համբալություն ես անում: Վեր ցցի՝ եղ ջվալն ու ետելիցս արի:

Եղբորը տանում է, նոր շորեր առնում, հազցնում՝ ուր ու գուխը նորոգում: Գալիս են քաղաքի ծայրին մի խանություն հայ են ուտում: Դուրս գալու ժամանակ տղան խանությանին հարցնում է: - Ի՞նչ պիտի տանք:

- Հինգ մանեթ, - ասում է խանությանը:

Տղան սարի Տերողորմեն հանում է տալիս խանությանին, առում: - Ա՛ռ, իինք մանեթի տեղ թեզ ամանաթ, որ փողը բերինք՝ Տերողորմեն ետ կտա:

Սա ել վերցնում է Տերողորմեն, պատից կախ անում:

Եղբոր հետ գալիս է այգեպանի մոտ, ասում է: - Էս ախապոր Հապարան բլրուլի հետ կպահես, մինչի գնամ մեկել ախապոր գտնեմ, բերեմ:

Ընկնում է վերին ճամփան, մեծ նղբոր ետելից գնում: Գնում է մի քաղաք մտնում, տեսնում է մեծ եղբայրը, երկու էշ առաջին արած՝ աղբը բարձած գալիս է: Սա ել եկել էր մի այգեպանի մոտ մշակ վարձվել, մենակ մի վերնաշապիկ կար հագին, քամին որ փշում էր, փեշերը ետ ատնում, թե՛ ու թիկունքը բացվամ էր:

Եղբորը ասում է: - Դու թագավորի մեծ տղեն ըլնես ու եղ օրում: Ձո՞՞ն էշերը ու ետելիցս արի:

Ախապոր վերցնում է, նոր շորեր առնում, հազցնում, տանում է մի հյուրատուն, լավ ուտենանում, խմեցնում: Դուրս գալու ժամանակ տանտիրոջը հարցնում է:

- Ի՞նչ պիտի տամ:

- Հինգ մանեթ, - ասում է տանտերը:

- Առ էս Զիբուխը, երբ որ քո փողը կորկեմ, Զիբուխը ետ կտա:

Են մարդն էլ ասում է՝ լա՛վ: Վերցնում է Զիբուխը, պատիցը կախ անում:

Տղան մեծ ախապորն էլ առնում, գալիս է այգեպանի մոտ: Երեր եղբայրները միանում են, Հապարան բլրուլը վերցնում ու

Ճամփա ընկնում:

Գալիս են, գալիս, շատն ու քիչը իրենք գիտեն, ճամփին փոքր եղայրը ետ է մոռում: Ես մեծ ու միջնեկ եղայրները գալիս են հասնում մի ջրհորի, խալիչեն գցում են հորի թերանին ու ամեն մեկը մի ծայրին նստում:

Փոքր եղայրը բեկարած, հոգնած գալիս է հասնում նրանց: Ասում են. - Այ ախաբեր շան, արի, արի, նստի՝ դինչացի:

Նա գալիս է մեջտեղը նստում: Եղայրները վեր են կննում թե չե, նա խալիչեն տակին ընկնում է ջրհորը:

Ասում են. - Խալիչեն մեկ տուր, քեզ էդտեղից հանենք:

Ասում է. - Որ դուք հանող լինեիր, ինձ էս հորը չէիք գցի. առե՛ք ձեր խալիչեն, գնացեր, կորեր:

Եղայրները գալիս են տու և հասնում: Հապարան բլրուլը տալիս են իրենց հորը: Հայրն էլ վերցնում է Հապարան բլրուլը, կախ անում պատժի: Ի՞նչ անում, չեն անում՝ Հապարան բլրուլը չի երգում, ձեն չի հանում:

Սրանց թողնենք էստեղ, լուր տանք փոքր եղբորից: Մի վաճառական է գալիս էդ ջրհորի զիմին կանգնում, քարավանը տանելիս միշտ էդտեղից ջուր է վերցնում: Ուզում է, որ ջուր հանի, տեսնում է ջրհորում մի մարդ կա: Պարանը կախում է դուրս հանում, տեսնում է մի սիրուն, շնորհրով տղա, ասում է. - Այ տղա, էստեղ ի՞նչ ես շինում:

- Քինք ճամփա էի գալիս, մյանգիշեր էր, եկա ու հանկարծ ընկա էս հորի մեջ:

Վաճառականն ասում է. - Այ որդի, ես զավակ չունեմ, դու կը լնես իմ տղան:

Վաճառականը նրան որդեգրում է ու տանում գործի դնում իր խանութում: Ես տղան սկսում է իրեն համար կարգին առեւտուր անել:

Հիմի էլ լուր տանք Հապարան բլրուլի տեր թագավորից: Թագավորը առավոտը վեր է կենում տեսնում Խանչալը չկա, Զիրուիք չկա, Տերողորմեն չկա, Հապարան բլրուլը չկա. կանչում է Նապիր-վեպիրին, երամայում, որ կովի պատրաստություն տեսնեն:

Զորքը հափարում են ու ճամփա ընկնում: Գալիս են հասնում Ծերունու մոտ:

Թագավորն ասում է. - Էսքան ժամանակ ինձ պահպանել ես, ես ո՞նց է պատահել, որ հիմի իմ ունիցվածքը թալանել ես տվել:

Հալիվորն ասում է. - Թագավորն ապրած կենա, թու աշխարհի չորս կողմովը ճամփա կա, բարի ուրիշ ճամփով են տարել.

ես ի՞նչ իմանամ:

Թագավորն իրեն զորքով հասնում է այգեպանին: Տեսնում են այգեպանը թագավորի Խանչալը ձեռին փայտ է կտրում, ծայրերն ել սրում:

Նապիր-վեպիրը այգեպանին ծեծում են, ասում:

- Ես Խանչալը քեզ որտեղի՞ն, ո՞վ է տվել քեզ:  
- Ախանի՛ր, - ասում է, - ինձ ինչի՞ եր սպանում, թողեր տանի.  
Ժի տղա բերեց ինձ տվեց ու ինքը գլաց. ես ել աղքատ մարդ եմ, ցարատս կոտրել է. կացին ել չունեմ, ես խանչալով փետ եմ կտրում:

Թագավորը հարցնում է. - Խանչալի գինն ի՞նչ է:

- Հինգ մանեթ, - պատասխանում է այգեպանը:

Թագավորը հանում է հինգ մանեթը տալիս այգեպանին, Խանչալը վերցնում, հետո հարցնում է, թե. - Են տղեն ո՞ւր զնաց:

Այգեպանն ասում է. - Ես միշի ճամփովը գնաց:

Թագավորը զորքը բշում է, են միշի ճամփան բռնում՝ գնում հասնում է մի քաղաք, մտնում են են խանութը, որտեղ որ թագավորի տղաները հաց էին կերել: Տեսնում է իր Տերողորմեն էստեղ կախ արած, հարցնում է. - Դրա գինն ի՞նչ է:

Խանութպանն ասում է. - Հինգ մանեթ:

Հանում է հինգ մանեթը նալիս, Տերողորմեն վերցնում, ես գալիս այգեպանի մոտ, հարցնում. - Են տղեն հետո ո՞ւր զնաց:

- Ես վերի ճամփով գնաց:

Վերի ճամփով գնում են, հասնում էն քաղաքը, էն հյուրատունը, որտեղ թագավորի տղաները հաց էին կերել, հանգըստացել: Մտնում են հյուրատուն՝ հաց ուտելու, տեսնում են թագավորի Զիրու իր էստեղ կախ արած:

Թագավորը հարցնում է. - Ես Զիրուի գինն ի՞նչ է:

- Հինգ մանեթ, - ասում է տանտերը:

Հինգ մանեթը տալիս է. Զիրուիը վերցնում ու ես դառնում:

Գալիս են նորից այգեպանի մոտ, հարցնում, թե՝ են տղեն հետո ո՞ւր զնաց:

Այգեպանը ճամփան ցույց է տալիս: Հապարան բլրուլի տեր թագավորը զորքով գալիս հասնում է էն քաղաքը, որտեղ Հապարան բլրուլը էր: Լուր է տալիս էդ երկրի թագավորին. - Հապարան բլրուլը որկի, թե չե քաղաքի տակն ու վրա եմ անում:

Թագավորը տղաներին կանչում է, ասում. - Որդի՛ք, Հապարան բլրուլի տերը կեկլ է՝ Հապարան բլրուլը ուզում է, զնացը պատրասխան տվեր:

Տղոները վեր են կինում, գալիս Հապարան բլրուլի տիրուց

մուտ, ասում են. - Հապարան բլրուլը մենք ենք բերել:

- Ո՞նց եք բերել, - հարցնում է թագավորը:

Ասում են. - Տուն մտանք, վերցրինք բերինք:

Հապարան բլրուլի տերն ասում է. - Սուտ եք ասում, Հապարան բլրուլը դուք չեք բերել, գնացեք աշբից հեռացնեք: - Ասում է ու ծեծելով վանդում:

Թագավորի տղաները ամոթով ետ են գնում:

Հապարան բլրուլի տերը նորից է լուր տալիս թագավորին.

- Իմ Հապարան բլրուլը որկի, թե չէ քաղաքդ տակն ու վրա եմ անում:

Լուրը գնում, հասնում է փաճառականի տղային:

Սա հորն ասում է. - Ասի՛, արի, գնանք տեսնենք էդ ի՞նչ բան է:

- Այ որդի, - ասում է, - ի՞նչի՞ն է պետք, քո բանին կաց:

- ԶԵ՛, ասում է, - ասի՛, գնա՞նք, բարի ձեռներից մի բան է գալիս:

Հայր ու տղա գնում են թագավոր մոտ:

Տղան ասում է. - Թագավորն ապրած կենա, ինձ ի՞նչ կտսա, որ Հապարան բլրուլի տիրոջը խստեղից հեռացնեմ:

- Ի՞նչ կուվսի՝ կտամ, - պատասխանում է թագավորը:

Էդ տղան գալիս է Հապարան բլրուլի տիրոջ մոտ ու ասում.

- Թագավորն ապրած կենա, ի՞նչի ես եկել ժողովրդին լեզածար անում: Հապարան բլրուլ բերողը մի մարդ կօլի: Հիմի էս սադ քաղաքը ի՞նչ մեղավոր է, որ ուզում ես տակն ու վրա անես: Բո Հապարան բլրուլը ես եմ բերել, ինչ ուզում ես՝ արա ինձ:

- Ո՞նց բերեցիր, - հարցնում է բլրուլի տերը:

- Ես Գնացող-ես շղարձող ճամփով եկա, տեսա՛ ճամփի կողքին մի պալատ, մոտք մի Ծերունի նստած: «Բարով!» տվի անց կացա, նա ինձ ետ կանչեց, «Ո՞ւր ես գնում»: Ասի. «Գնում եմ Հապարան բլրուլը բերեմ». Ծերունին ինձ մի Քեշա-բյուլան տվեց: Գլխիս դրի, մտա քու պալատը: Բրիկնահացը կերա, բնեցի: Վեր կացա Խանչաղդ, Զիրուխտ, Տերողորմեդ ու Հապարան բլրուլը վեր կալա ու եկա Ծերունու մոտ: Քեշա-բյուլանը ես տվի, հարցրեց. «Հո ուրիշ բան չվերցրի՞ր»: Ասի. «ԶԵ՛, մենակ Հապարան բլրուլն եմ բերել»:

Հապարան բլրուլի տերը տեսնում է, որ ամեն բան էդ տղան տեղը-տեղին պատմեց, ասում է. - Եդ բոլորը ճիշտ են ասում, իմ Հապարան բլրուլը բերողը դու ես: Հիմի ես ու գու պիտի կոյի անենք, թե դու հաղթեցիր՝ Հապարան բլրուլը քոն է, յու ես հաղթեցի՝ գյուիդ կուրելո: իմ ու Հապարան բլրուլը տասնեմ:

Սրանք կոյն են բռնում: Եդ տղան Հապարան Բլրուլի տիրուց վեր է գցում ու ըկին չորում: Հապարան բլրուլի տերն ասում է. - Ա՛յ տղա, ինձ ձեռ մի տալ, ես աղջիկ եմ. ես ուխտ էի արել, ով որ ինձ հաղթի՝ նրան ուզեմ: Ես ալամ աշխարհում մենակ դու էիր, որ ինձ հաղթեցիր, սրանից հետո դու իմն ես, ես՝ քոն սը:

Սրանք վեր են կինում, իրար ձեռք բռնած գնում են թագավորի պալատը: Հենց պալատ են մտնում, Հապարան բլրուլը խոսում է, ծլվում, երգում:

Թագավորն ասում է. - Ես ի՞նչ բան է. Հապարան բլրուլը խոսից:

Տղան ասում է. - Հալքաթ կիսոսա, համ տերն է էստեղ; համ բերողը: Բներողը ես եմ, քա պուճուր տղան: Ու պատմում է ամբողջ եղելությունը:

Թագավորն էդ բռպին հրամայում է մեծ ու միջնեկ տղաներին հեռացնել իր երկրից: Բերում է փոքր տղային ու էդ աղջկան փառորով-պատվով պակում, հարսանիք անում:


Նրանք հասնում են իրենց փափազին, դուր է ի հասներ ձեր փափազին:

(գնում)

(գնում)

(գնում)

(գնում)



## ԵՆ Ի՞ՆՉՆ Է. Ի՞ՆՉԸ...



Առաստաղը բաց անեմ,  
Առանց կրակ հաց տնեմ:

(փեթակ)

Պոչից բռնեմ,  
Արդար կանչի:

(կղիոր)

Անվարել բուսնում է.  
Հնձում եմ՝ չի ուսվում:  
(մարգ)

Պատիկ եմ, պատիկ եմ.  
Աշխարհը մեջս տեղ կանի:  
(աքեր)

Պատիկ սիրուն տուն ունեմ,  
Մեջը հազար սյուն ունեմ:  
(քերան)

Թույր ու եղբայր են.  
Մինն առավոտն է ծնվում,  
Երեխյան մեռնում.  
Մրտոք՝ երեխյան ծնվում է՝  
առավոտը մեռնում:  
(լուսին, արեն)

Բնչ որ ասենք՝ մեջն է լցվում:  
(ականջ)

Ենքը երկար,  
Պոշն իրենից երկար:  
(աղլիս)

Են ինչ բաղաք է.  
Դուրսը արծար է, ներսը՝ ոսկի.  
Որ քարով տառ՝ կրանդի.  
Ել չի շինվի:  
(ձու)

Սարս ալյուր մաղեց,  
Ինո, դաշտ պատեց:  
(ձրոն)

Լարը քաշեմ,

Սարը շարժեմ:

(ուղու)

Են ինչն է.

Միշտ բերանիդ մեջ է.

Բայց կուլ չես տալիս:  
(լեզու)

Քար եմ, բայց քար չեմ,  
Արեւ կպավ՝ կհալչեմ  
(ասոուց)

Են ի՞նչն է, ի՞նչը  
Քիթը ոսկորից,  
Սորուքը մսից:

(աքլոր)

Սիւ սատանին բնոյն օլորեց,  
Հազար-հազար մարդ գլորեց:

(գիշեր)


Սամում եմ՝ չի ծամփում,  
Անձամիկ կուլ եմ տալիս:

(զուր)

Ուլուլիկ, պուլուլիկ,  
Մեջը լիքը կարմիր ուլնիկ  
(նուր)

Առանց ոտքի,  
Առանց ձիռքի  
Դոներ է բացում:

(քամի)



## ԱՌԱԾԱՆԻ

1. Գառն ու գելը որ մի ձորում հանդիպեցին, վայ գառի  
հալին:

2. Սոված հավը երապում կուտ է տեսնում:
3. Գործը էգուցքան մնաց, իմացի՝ կորավ գնաց:
4. Շատ լսիր, թիշ խոսիր:
5. Հասկացողին մին ասա, չհասկացողին՝ հազար ու մին:
6. Սուտասանի տունը կրակ ընկավ, ոչ ոք չհավատաց:
7. Շները կուվեցին, անցորդի բանն հաջողեց:
8. Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա:



## ՄԿԱՆ ԹԱԿԱՐԴ



(Ժողովրդական խաղեր)

\* \* \*

Եկե դուկե տըմբավ,  
Զալան չուկե պուպուզա,  
Մախտե կոճակ,  
Դան պլոճակ,  
Ճան-ճուկ:

\* \* \*

Բութմատն ասաց՝ գայլը եկագ:  
Ցուցամատն ասաց՝ որտեղի՞ց եկագ:  
Միշնամատն ասաց՝ սարից եկագ:  
Սատնեմատն ասաց՝ նկեր փախչենք:  
Ճկույթն ասաց՝ պատլիկ եմ,  
Ճսույկ եմ,  
Ոտիկ չունեմ,  
Թեւիկ չունեմ,  
Ինչպե՞ս փախչեմ:

## ԹՎԻԿ-ԹՎԻԿ

Ճվիկ-ճվիկ,  
Ալսու ճվիկ,  
Կորմիք կուուց,  
Նախշուն թիւիկ,  
Ձռսի գնա հեռու քաղաք,  
Միկ բուրդ բերի ու շատ քամբակ.

Գուլպա գործենք,  
Գլխարկ գործենք,  
Խորոտ բալի զիսին կործենք:  
Ձը՞ն, ճնճուղիի՞ն:

\* \* \*

Ճկութն ասաց՝ այ բույրիկներ, շան բույրիկներ, սոված նմ.  
Մատնն մատն ասաց՝ հաց ուտենք.  
Միջնամատն ասաց՝ որտեղի՞ց ուտենք.  
Ցուցամատն ասաց՝ գնանք ճարենք,  
Բութ մատն ասաց՝ գողաճանք ուտենք:  
Սափի՞ն, ծափի՞ն, ծափ նապարով,  
Փըլպվ կեփեմ պուտկներով.  
Գդալ չկա, լափաշ չկա,  
Տենք էլ կուտենք մատիկներով:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿՈՒՏԵՍ

(ժողովրդական)

- Փիսիկ, այ փիսիկ,
- Անպոչ գդալով:
- Այդ ի՞նչ ես տանում:
- Գդալդ ու՞ր է:
- Կարագ ու մեղք:
- Վայ, վայ, կորեկ է:
- Ի՞նչ ես անելու:
- Բա ինչպի՞ս կուտես:
- Ես պիտի ուտեմ:
- Այսպի՞ս, թաթիկով,
- Բակ ինչո՞վ կուտես:
- Պաչով, քթիկո՞վ:

\* \* \*

Ծուդրուդո՞ւ, սանամեր,  
Են մեկ կառք կար, ո՞ւր գնաց,  
- Ծարալ աղբրում կուլ գնաց:  
- Ի՞նչ կառ կտցում:  
- Շիր ու չումիչ,  
- Ո՞ւր կը սամում:

- Հարս ու փեսին:
- Ուսկի թախտին:
- Բ՞նչ էր եփում:
- Համով կորկում:
- Ո՞ւր էր դրել:
- Բաց պատուհան:
- Ո՞վ է կիրել:
- Սեւ փիշիկը:
- Այ սեւ փիշիկ, վա՞յ սեւ փիշիկ,  
Քո մերն ուտի քո թշիկ:

## ԱՓ ՈՒ ՊՏՂՈՒՅՑ

Իրար դիմաց նստելով՝ խաղացողները մրցում են հետեւյալ ձեւով: Խաղացողը բաց է անում ձախ ափը և աջ ձեռքի մատները պտղունց ձեւացնելով՝ հենում է ձախ ափամիջին: Հետո բացում է աջ ափը և ձախն է պտղունց անում ու հպում աջ ափամիջին, անմիալ կարգով գործողությունը կստարգում է ակնթարթային արագությամբ, մերթ մեկ, մերթ մյուս խաղացողի կողմից:

## ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒ

Երեխաներից մեկը ընտրվում է մուկ, մյուսը՝ կատու: Երեկուսի աշքերը թաշկինակով կապում են, թնել երեխն մկանը բաց են թողնում: Մուկը, ձեռքն առնելով 2 փորքիկ քար, միմյանց է խփում ու վագում այս ու այն կողմ: Կատուն այդ շխմշխմոցի միջոցով հետեւում է նրան՝ աշխատելով բռնել: Երբ հաջողեցնում է, դերերը փոխում են:

## ՃՆՃՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՏՈՒ

Գետնին 5-6 մ տրամագծով շրջան են գծում: Խաղացողներից մեկին «կատու» են նշանակում, որը կանգնում է շրջագծի մեջ: Մնացածները ճնճղու կներն են, որոնք կանգնում են շրջանից դուրս: Խաղը սկսելուց հետո ճնճղուկները թռչուածելով մտնում են շրջան և գուրս գալիս, իսկ կատուն նրանցից մեկին շրջանի մեջ պեսը է բռնի:

Խաղի կանոնները.

1. Կատուն ճնճղուկներին պետք է բռնի միայն շրջանի մեջ:
2. Ճնճղուկները շրջանի մեջ եւ նրանից դուրս թոշկոտում են մեկ կամ երկու ուսորով:

## ՄԿԱՆ ԹԱԿԱՐԴ

Խաղացողները բաժանվում են երկու խմբի: Մի խումբը (կատունները) շրջան է կապմում, իսկ մյուս խումբը (մկները) ցրվում է: Կատունները կապմում են շրջան-թակարդ եւ արտասահնում:

Այս, որքան ձանձրալի են այս մկները,

Կրծոտել են ու լափել եղած ողջ կերը,

Որտեղ նայես՝ մկներ են ճատիկ,

Թագմացել են ու տարածվել սաստիկ:

Մենք էլ հիմա թակարդ կդնենք

Ու էս մկներին տեղում կը ընենք:

Վերջին 2 տողերն արտասահնելիս կատունները բարձրացնում են ձեռքերը եւ մկները սկսում են վազվակել շրջանից ներս ու դուրս: Խաղավարի ազդանշանով կատունները ձեռքերն իշխնում են եւ կրաստում:

Այսուհետեւ խմբերը տեղերը փոխում են: Վերջում հաշվում են արդյունքները, որ խումբը շատ մկներ է բռնել, խաղում է:

Խաղի կանոնները.

1. Թակարդը փակվում է ապդանշանից հետո:

2. Թակարդում մասցածները պյու ճեղքելով անցնելու իրավունք չունեն:

## ԹՉՈՒԿՆԵՐ ԵՎ ՀՍԿԱՆԵՐ

Խաղացողները կանգնում են շրջանով: Երբ խաղավարը ասում է՝ հականներ, բոլորը բարձրանում են ուսնաթաթերին եւ ձեռքերը բարձրացնում վեր, իսկ եթե ասում է՝ թպուկներ, երտևուում են՝ ձեռքերը տարածելով առաս:

Մի քանի անգամ խաղալուց հետո, խաղավարը «խառնում» է շարժումները, այսինքն «հականներ» ասելիս ինքը կրանստում է, իսկ «թպուկների» ժամանակ բարձրանում ուսնաթաթերին՝ ձեռքերը վեր բարձրացնելով: Սա արվում է երեխաններին շփոթեցնելու եւ խաղն աշխուժացնելու համար: Խաղացողները պետք է ճիշտ կատարեն խաղավարի հրահանգները եւ ոչ թե հետեւն շարժումներին:

## ԿԱՏՈՒՆ ԵԿԱՎ

Դակիլիձի մի անկյունում գտնվում է «կատվի տունը», իսկ «մկները» ցրվում են դակիլիձում, պարում, կատարում տարրեր շարժումներ: Խաղավարի «կատուն եկավ» ապդանշանից հետո մկները սկսվում են: Կատուն դուրս է գալիս «տնից», հետեւում մկներին եւ, ով մի փոքր շարժում է կատարում, նրան բռնում եւ «տուն» է տանում: Խաղավարի «կատուն գնաց» ապդանշանից հետո կատուն վերադառնում է գունի, իսկ մկները շարունակում են պարել, վազվել: Մի քանի մուկ բռնելուց հետո փոխում են կատվին:

Խաղի կանոնները.

1. Երբ կատուն մտնում է խաղահրապարակ մկներին չի թույլատրվում շարժվել այնպես պիտի շարժմեն, որ կատուն չնկատի:

## ԹԱՆԱՅԻՐ ԳՐՈՇԱՎ

Խաղացողները բաժանվում են 3 խմբի եւ շրջաններ կապմում: Յուրաքանչյուր խմբի ավագը կանգնում է շրջանի մեջտեղում՝ ձեռքին դրոշակը 3 դրոշակներն ել տարրեր գույնի են: Խաղավարի «ցրվիր» հրահանգով բոլոր խաղացողները, բացի ավագներից, ապատ թռվում, վազվում են այս ու այն կողմ: «Փակել աշքերը» հրահանգով բոլորը փակում են աշքերը: Այդ ժամանակ ավագները փոխում են դրոշակները: «Գտիր դրոշակղ» հրահանգով բոլոր խաղացողները շրջան են կապմում իրենց դրոշակի շուրջը: Որ խումբը շուտ է գտնում իր դրոշակը եւ նրա շուրջ շրջան կտպմում՝ ևա էլ հաղթում է:

Խաղի կանոնները.

1. Ավագները փոխում են դրոշակները և ոչ թե տեղերը:
2. Խաղացողները շրջապատում են այն ավագին, որի մոտ գտնվում է իրենց դրոշակը:

## ԹՎՆ ԱԼԵԿՈՇՎՈՒՄ Է

Բոլոր խաղացողները կազմում են մեծ շրջան: Խաղավարը դուրս է գալիս շրջանից, շրջում եւ, մոտենալով առանձին խաղացողների, ասում՝ ծովն աշեկոծվում է: Ում որ ասում է, նա պետք է հետեւ ի խաղավարին: Այսպիսով, բոլորը գնում են խաղավարի հետեւից, կատարելով այն շարժումները, ինչ որ կատարում է նա: Նա կարող է ցատկել, պարել, վագել: «Ծովը հանդարտվեց» հրահանգից հետո բոլորը արագ վագում են կանգնում են իրենց տեղերում:

Խաղի կանոնները.

1. Պետք է կատարել խաղավարի բոլոր շարժումները:
2. Պետք է ընտրել հնարագետ խաղավարի, որպեսզի խաղն անցնի հետարքորդի եւ աշխույժ:
3. Խաղավարին տարբերելու համար նրա գլխին թղթի մեծ գլխարկ են ուղարկ:

## ԵՐԿՈՒ ՍԱՌՆԱՄԱՆԻՔ

Դահլիճի 2 կողմերում 2 «տներ» են գտնվում: Խաղացողները հավաքում են տան մեջ, իսկ նրանցից երկուսը՝ «սառնամանիքները» կանգնում են 2 տների մեջանդում: «Սառնամանիքները» միասին դիմում են երեխաներին.

«Երկու եղբայր ենք պատանի,

Սառնամանիք անվանի:

I սառնամանիք. Սառնամանիքն եմ կարմրաքիթ:

II սառնամանիք. Ես եմ նույնը, բայց կապտարիթ:

Ով ձեզանից սիրտ կասի.

Ձող գլուխը դուրս հանի:

Երեխաները պատահունենում են:

Ձենք վախինում ձեզունից:

Այս ասելուց հետո երեխաները վազում են դեպի մյուս տունը: Սառնամանիքները ում որտեղ բռնում են, ցրտահարում են: Ցրտահարվածը էլ չի կարող տուն հասնել, կանգնում է անշարժ: Վազողները ցրտահարվածներին կարող են պատել՝ նրանց ձեր տպով:

## ԹՈՉՈՒՆԵՐՆ ՈՒ ՎԱՆԴԱԿՔ

Խաղացողները բաժանվում են 2 խավասար խմբի: Խմբերից մեկը կազմում է շրջան՝ «վանդակ», իսկ մյուս խումբը՝ «թոշունները», գտնվում են վանդակից դուրս:

Որիւէ ապդանշանով (ծափով, երաժշտությամբ) վանդակ կազմած խաղացողները ձեռքերը բարձրացնում են վեր, իսկ թռչունները մտնում են վանդակ եւ դուրս գալիք: Երաժշտության հանկարծակի ավարտումով շրջանում կանգնած երեխաները ձեռքերը իջևնում են կրանսում են՝ փակելով վանդակը: Այնուհետեւ խմբերը դերերը փոխում են:

## ՈՒՐԱԽ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Խաղացողներից մեկին ընտրում ենք խաղավար, մյուսները կույգ կազմելով կանգնում են 2 սյունաշարով: Խաղավարը գտնվում է շարքի առջեւում: Երեխաներն արտասանում են.

Մենք ուրախ երեխաներ ենք.

Սիրում ենք վագել, սիրում ենք խաղալ,

Ձե կարող ես՝ շտապիթ,

Վազող կույգին շուտ բռնիք:

Այս ասելուց հետո, վերջին կույգը կազմող երեխաներից մեկը աջ է վազում, մյուսը՝ ձախ, աշխատում են հասնել իրար ձեռքերը բռնել: Իսկ եթե խաղավարին հաջողվում է բռնել նրանցից մեկնումնեկն դեռ կույգ չկազմած, այդ դեպքում բռնվողը դառնում է խաղավար: Իսկ նախորդ խաղավարը կույգ է կազմում այն խաղացողի հետ, որին չեր բռնել:

## ԱՍԵՂ, ԹԵԼ, ՀԱՆԳՈՒՅՑ

Խաղացողները իրար ձեռքից բռնած շրջան են կազմում: Խաղացողներից երեք հոգի առանձնացվում են, որոնցից մեկը «ասեղն» է, մյուսը՝ «թելը», երրորդը՝ «հանգույցը»: Նրանք կանգնում են շրջանից դուրս, իրար հետեւից՝ ասեղը, թելը, հանգույցը:

Նեկավարի պաղանջանով ասեղը վազում է, նրա հուեւից՝ թելն ու հանգույցը: Որտեղից անցնի ասեղը, այնտեղով է պետք է անցնեն թելն ու հանգույցը:

Խաղացար ասեղի դերում պետք է ընտրել ճարպիկ, հնարագետ երեխաների:

Շրջան կազմող երեխաները պետք է ձեռքերը վեր պահեն եւ չխաղաքարին խաղակարներին:

## ՀԻՆԳ ԱՅԾԱՏԵՐ

Խաղում է 5-10 երեխա: Նրանք, առանց իրար ձեռք բռնելու, շրջան են կազմում: Մեկը ձեւանում է 1, երկրորդը՝ 3, երրորդը՝ 5 այծի տեր, ապա հաջորդաբար 7, 10, 15: Նրանցից յուրաքանչյուրը պետք է հիշի իր այծերի թիվը:


Խաղն սկսելիս խաղակիցներից մեկը հայտարարում է.

- Գյուղին հարկ է եկել, ո՞վ պիտի տա:
- Ձող երեք այծատերը տա, - պատասխանում է մյուսը:
- Հաշվիր գյուղի վրա, թող գյուղը տա, երեք այծատերն ինչո՞ւ տա, - վրա է տալիս երեք այծատերը:
- Գյուղն ինչո՞ւ տա, թող 5 այծատերը տա, - ասում է հաջորդը:


5 այծատերը անմիջապես վրա է բերում.

- Ինչո՞ւ 5 այծատերը, թող 15 այծատերը տա:

Խաղն այսպիս շարունակվում է այնքան, մինչեւ մեկը շփորփում է: Պարտիողը խաղից դուրս է գալիս կամ որեւէ «պատիժ» է ստանում:



## ԵՐԳԱՐԱՆ



Ա - րի՛, ա - րի՛, ա - րի՛ դուս, թիվ թի - թի՛ ենք աշ - րի՛ լուս,  
թի թի - րի - կը՝ Լուս-ըն - կան, թի - թից չա - միշ մեկ ա - ման,  
Ամ-պի՛ ե - կառ մութ ա - րավ, չա - միշն աշ - թի - թիս լու - րավ:  
Բայ ե - թի - պի՛, ա - թի - գուկ, մի բուռ չա - միշ թիվ կը-առանք



Օ՛խ, ա - թի - ին խա - թի-ցինը, օ՛խ, ա - թի - ին խա - թի - ցինը,

օ՛խ, ա - թի - ին խա - թի-ցինը, ամ-պի՝ տակ-են հա - նե-ցինը

ամ - պի՝ տակ-են հա - նե - ցինը:

Արե՛՛, արե՛՛, արի դուս  
թիվ թիրեկ ենք աշքի լուս,  
թի թուրիկը՝ Լուսընկան,  
թիրեց չամիշ մեկ աման,  
Ամպի՛ եկավ մութ արավ,  
Չամիշն աշքերես կքրավ:  
Բայ երեսը, արեկավ,  
Սի բուռ չամիշ թիվ կըտանք:

Օ՛խ, արեւին խարեցինը,

Օ՛խ, արեւին խարեցինը,

Օ՛խ, արեւին խարեցինը,

Ամպի՝ տակ-են հանեցինը:

Ամպի՝ տակ-են հանեցինը:

## ՀՈՂ ԹՈՒ

Կայսուն

Խնձոր նս ծառի վրա,

Հայկո ջան,

Շաղիկ նս սարի վրա,

Վարսո ջան.

Հողակ թունի, հողակ թունի,

Հայկո ջան,

Շուտ, թունի, շախով թունի,

Վարսո ջան:

Անուշ տարդ ասող բրւրուլ,

Հայկո ջան,

Վայնել հս քարի վրա,

Վարսո ջան,

Հողակ, թունի...

Աղքար ունեմ պովչի ա,

Համելո ջան,

Մեջքը քարակ դամշի ա,

Վարսո ջան,

Հողակ, թունի...

## ԱՅԲ, ԲԵՆ, ԳԻՄ

Խրոխուն

Այբ, թեն, գիմ,

Դա, եչ, զա,

Այբ, թեն, գիմ,

Դա, եչ, զա,

Այբ, թեն, գիմ,

Դա, եչ, զա;

Ճի, մեն, յի (իի),

Նու, շա, ո,

Ճի, մեն, յի (իի),

Նու, շա, ո,

Ճի, մեն, յի (իի),

Ե, ըթ, թո,

Ժե, ինի, լյուն,

Ե, ըթ, թո,

Ժե, ինի, լյուն,

Ե, ըթ, թո,

Ժե, ինի, լյուն:

Զա, պի, ջի,

Ուու, սե, վեվ,

Զա, պի, ջի,

Ուու, սե, վեվ,

Զա, պի, ջի:

Խե, ծա, կեն,

Հո, ձա, դատ,

Խե, ծա, կեն,

Հո, ձա, դատ,

Խե, ծա, դատ:

Տյուն, թե, ցո,

Վյուն, փյուր, թե,

Տյուն, թե, ցո,

Վյուն, փյուր, թե,

Տյուն, փյուր, թե:

## ԽՆԿԻ ԾԱՌ

Գևայուն և կրտսեան

Սեր դը - ռա - սը խըն - կի ծառ, Գյու - լում ջան,  
խըն - կն - սին ա բն - բն բար, Գյու - լում ջան.  
Զեր դը - ռա - սը խըն - կի ծառ, Գյու - լում ջան,  
իմ խո - րո - տիկ պըզ - տիկ յար Գյու - լում ջան:

Սեր դրասանը խընկի ծառ,  
Գյուլում ջան,  
Զեր դրասանը խընկի ծառ,  
Գյուլում ջան,  
Խընկենին ա բներել բար,  
Գյուլում ջան,  
Իմ խորսոտիկ պըզտիկ յար  
Գյուլում ջան:

Սեր դրասանը խընկի ծառ,  
Նախշուն բըլուկ վըրեն թառ,  
Երթար ու գար, շորոր տար,  
Միրուն յարին օրոր տար:

Սեր դրասանը խընկի ծառ,  
Մարշան բըլուկ վըրեն թառ,  
Գընար ու գար, շովին տար,  
Ասուշ յարի թնեին տար:

Սեր դրասանը խընկի ծառ,  
Ուկի բըլուկ վըրեն թառ,  
Կարմիր խընձոր անել տար,  
Ալվան ծաղիկ տանել տար:

## ԿԹԻ ԵՐԳ «ԻԼԻԼԻ, ԴԻԼԻԼԻ»

Հնկ էծ ունեմ ու - լի - րով, ի - լի - ի, ով - լի - թ:

Հինգ էծ ունեմ ուլիքով,  
Իլիլի, ոլիլիլի,  
Կար կրկրթեմ գույլերով,  
Իլիլի, ոլիլիլի,  
Սեր կըշտիեմ կալ շափով,  
Իլիլի, ոլիլիլի,  
Եղ կըհանեմ լիի տրկով,  
Իլիլի, ոլիլիլի:

## ԽՆՈՑՈՒ ԵՐԳ

Հա - րի, հա - րի, խը - նո - ցի, մե - ջոյ բա - րի, խը - նո - ցի.

Հարի, հարի, խընցի,  
Մեջրդ բարի, խընցի,  
Ունկըդ բարակ, խընցի,  
Մեջրդ կարագ, խընցի:

Փյավ կէփեմ նոշըկա,  
Փեսեն եկավ, տեղ չըկա,  
Հարի, հարի, խընցի,  
Բկըրլուդ բարի, խընցի:

## ՎԻՃԱԿԻ ԵՐԳ

Չափավոր և ուրախ

Սա-նի ա-սեմ ու շա - բն, շա՞ն, ծա - դիկ, շա՞ն, շա՞ն  
լոյ-նմ տոպ-րակ ու կա-րեմ, շա՞ն, վի - ճակ, շա՞ն, շա՞ն

Սանի ասեմ ու շարիմ,  
Զա՞ն, ծաղիկ, շա՞ն, շա՞ն,  
Լրցնեմ տոպրակն ու կարիմ,  
Զա՞ն, վիճակ, շա՞ն, շա՞ն:

Ծաղիկ ունեմ նարընչի,  
Զա՞ն, ծաղիկ, շա՞ն, շա՞ն,  
Տըլա, վեր արի փրնչի,  
Զա՞ն, վիճակ, շա՞ն, շա՞ն:

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,  
Զա՞ն, ծաղիկ, շա՞ն, շա՞ն,  
Ուսկին ծպիծալ կուզեմ,  
Զա՞ն, վիճակ, շա՞ն, շա՞ն:

Հըրես եկամ իմ աղբեր,  
Զա՞ն, ծաղիկ, շա՞ն, շա՞ն,  
Երեք օրվան թագավոր,  
Զա՞ն, վիճակ, շա՞ն, շա՞ն:

Օսղիկ ունեմ, ալ այս,  
Զա՞ն, ծաղիկ, շա՞ն, շա՞ն,  
Ալա չի, ալվալա յս,  
Զա՞ն, վիճակ, շա՞ն, շա՞ն:

Արեւ կամար-կամար,  
Զա՞ն, ծաղիկ, շա՞ն, շա՞ն,  
Կապել ես ուսի բամար,  
Զա՞ն, վիճակ, շա՞ն, շա՞ն:

Սարեն կրզա ձիսվոր,  
Զա՞ն, ծաղիկ, շա՞ն, շա՞ն,  
Մեր տունը շարդախավոր,  
Զա՞ն, վիճակ, շա՞ն, շա՞ն:

## ԴԱՆ, ԴԱՆ, ԴԱՆԵԴԱՆ

Չափավոր և կառակով

Դան, դան, դանեն-դան, ձի հայ մը կեր, կողու եր, դան, դան, դանեն-դան,  
Փող-ից փողոց ման կու-գեր, դան, դան, դանեն-դան.  
Ինչ օր գրտեր՝ կու կու տեր,

Դա՞ն, դա՞ն, դանենդա՞ն,  
Ձի հայ մը կեր, կողու եր,  
Դա՞ն, դա՞ն, դանենդա՞ն,  
Փողցե-փողոց ման կու գեր,  
Դա՞ն, դա՞ն, դանենդա՞ն,  
Ինչ օր գրտեր՝ կուլ կու տեր,  
Դա՞ն, դա՞ն, դանենդա՞ն:


Պուտուկ փրլավ եփեցի  
Կոլու հավուն կերցուցի:  
- Կոլուտ հավ, ձի ձու մ'ածա:  
Տարա տրվի դ արքընին.  
- Դարբին, ձի դանակ մը տուր:  
Դանակ տրվի հովընուն.  
- Հովին, ձի մարի մը տուր:  
Սարին տրվի աստրծուն.  
- Աստված, ձի ախավեր մը տուր:  
- Ախավեր, ախավեր, ես թեզ շուն,  
- Ռնչ ես բարձի քու իշուն:  
- Խընգընն իմին, ապըրշուն:

Օձը տեսա ձըլպըտուն,  
Փախավ մտավ Սալրու տուն:  
Սալրի նրստեր, սակ կ'անա,  
Գըլուի կրտեր, նազ կ'անա,  
Հովերն եկան, քըշ կ'անա:

## ԷՍ ԱՌՈՒ

Գնայուն

քնքարար սիրով



Էս առուն ջուր է գալի  
Մի տեսեր - ուր է գալի.  
Գալիս է, գալիս է  
Սեր անե:


Թեսին մահանա արել.  
Իմ յարին հյուր է գալի.  
Գալիս է, գալիս է  
Սեր անե:

Վարդ և բաղել մաղերով.  
Վեր և դրել շաղերով.  
Արի, իմ սիրելիսն բուր.  
Առաջ գամ բեկ տաղերով:

Տանըս տակին կա նըռնի,  
Ես բարձ բերեմ՝ դու կըռնի,  
Ես, դու մի բաղում պիտենք,  
Դու՝ չինարի, ես՝ նոսի:

## ԱՂՋԵՔ, ՊԱՐ ԲՈՆԵՑԵՔ

Կհնսուրախ, աշխույժ



Աղջոկե՞ք, պար բռնեցեք,  
Արմիկի երս զովեցեք.  
Այ երս, շարմաղ երս.  
Դու մակ շրջողնես սեւերս:

Աղջոկե՞ք, պար բռնեցեք,  
Արմիկի աշեր զովեցեք.  
Այ աշեր, սիրուն աշեր,  
Արեւի պիս փայլուն աշեր:

Աղջոկե՞ք, պար բռնեցեք,  
Արմիկի կըռներ զովեցեք.  
Այ կըռներ, ուժեղ կըռներ,  
Դուք կըշարժեք մնծ-մնծ լեռներ:

Աղջոկե՞ք, պար բռնեցեք,  
Արմիկի հասակ զովեցեք.  
Այ հասակ, բարձրը հասակ,  
Բեկ կվայելի գափնյա պրսակ:

## ԹՈՒՇԱԿԻ ԵՐԳ

Չարկ բո-լո-ձիկ, զարկ,  
Ճա-շիկ դու պա - ղի.  
  
Չարկ բո-լո-ձիկ, զարկ,  
Ճա-շիկ դու պա - ղի:  
  
Դու զարկ, ես խա - ղամ.  
Սա - րակ դու քա - ղի:

Չարկ բոլոճիկ, զարկ,  
Դու զարկ, ես խաղամ.  
Չարկ բոլոճիկ, զարկ,  
Դու զարկ, ես խաղամ:

Ճաշիկ դու պաղի,  
Սարակ դու քաղի,  
Ճաշիկ դու պաղի,  
Սարակ դու քաղի:

## ՃԱԽԱՐԱԿԻ ԵՐԳ

Հով, մա-րակ, ինակ մա-րակ, ին'պ, մա-րակ չան ճափ - րու - կի ո-  
Հով, մա-րակ, ինակ մա-րակ, ին'պ, մա-րակ չան ճափ - րակ մա-նտ-  
ար փուշ ի.  
դը դուշ - ի

Հո'պ, մարակ, ին'պ, մարակ,  
Հո'պ, մարակ ջան,  
Ճախրակի ոտը փուշի.

Հո'պ, մարակ, ին'պ, մարակ,  
Հո'պ, մարակ ջան,  
Ճախրակ մանողը դուշի:

Ճախրակի ոտը ուռ ի,  
Ճախրակ մանողը ծուռ ի:

Ճախրակի ոտը տանձ ի,  
Ճախրակ մանող կուտան ձի:

Ճախրակի ոտը նուշ ի,  
Ճախրակ մանողն անուշ ի:

**ԹԱԳՎՈՐԻ ՄԵՐ, ԴՈՒՍ ԱՐԻ**




Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Տես քն ինչեր ենք քերի.  
Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Քն շուր քերող ենք քերի:

Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Տես քն ինչեր ենք քերի.  
Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Քն կով կըթող ենք քերի:

Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Տես քն ինչեր ենք քերի.  
Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Քն թաղդ ավլող ենք քերի:

Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Տես քն ինչեր ենք քերի.  
Թագվո՞րի մեր, դո՞ւս արի,  
Քն զլուխ դըմբռող ենք քերի:

**ԱՂՋԻԿ, ԱՂՋԻԿ, ՀԵՐԻԲՆԱԶ**



Աղջիկ, աղջիկ, Հերիբնազ,  
Եկ մեր բայսն, ածե սոզ.  
Մենք բոլորս կանենք տազ,  
Որ քեզանով անենք հոզ:

Բարդի ծառին բար չունի,  
Տակը բար ա, վարդ չունի,  
Միրոր որ կա՛ շուշա յա,  
Որ կուրեց, էլ ճար չունի:

Հեն սարեն մարդ ա զալի,  
Սարը կրամ ա տալի,  
Առաջս աղլուխ բացավ,  
Խմացա՝ վարդ ա տալի:

Տանըս տակին շըլոր ի,  
Ճըլները ետ կուրեի,  
Էրնեկ էն ըըվորը, որ  
Յորն աղբոր բագ կուրեի:

## ԶԵՊԻԿ, ԶԵՊԻԿ

Զեպիկ, զըպիկ, զարին ա: իգ - րս շուշան դարին ա:  
 Շուշան գընաց աղցանի, աղցան քեկը, չը - ցել էր, Զը - րի ճամփին  
 մոռ - ցել էր ամերն չեկավ և տարին, չորշավ տորին ու գարի:  
 Զը - պիկ, զը - պիկ, զարին ա: իգ - րս շուշան դարին ա:  
 Գոռ - գոռոցն ըն - կամ մե - րն լը - գայ կա - նաշ ու տե - րն.  
 Ան - ձրեն է - կավ, գյոլ է - րավ, ցո - րին ար - տը բոլ է - րավ:  
 Զը - պիկ, զը - պիկ, զարին ա: իգ - րս շուշան դարին ա:  
 Թե - լիկ, մե - լիկ մաս է - կա քե - զի համ - դն - ը ում գո - ռաւ.  
 Մե - րի - կըս թը - իմց գա - թա, ու - զից ըն - ձի քե - զի տա:  
 Զը - պիկ, զը - պիկ, զարին ա: իգ - րս շուշան դարին ա:

Զըպիկ, զըպիկ, զարին ա,  
 Նգդա շուշան դարին ա:  
 Շուշան գընաց աղցանի,  
 Աղցան չըկար, չորցել էր,  
 Զըրի ճամփին մոռցել էր,  
 Անձրեւ չեկավ էս տարին,  
 Չորցավ ցորեն ու գարի:  
 Զըպիկ, զըպիկ, զարին ա,  
 Նգդա շուշան դարին ա:  
 Գոռգոռոցն ընկավ վերեւ,  
 Լրվաց կանաչ ու տերեւ,  
 Անձրեւն էկավ, գյոլ էրավ,  
 Ցորեն արտը բոլ էրավ:  
 Զըպիկ, զըպիկ, զարին ա,  
 Նգդա շուշան դարին ա:  
 Թեկիկ, մեկիկ ման էկա,  
 Բեկի հանդերում գրտա,  
 Մերիկըս թըխսց զաթա,  
 Ուզեց ընձի թեզի տա:  
 Զըպիկ, զըպիկ, զարին ա,  
 Նգդա շուշան դարին ա:

# ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

<b>Ծուղրուղո՞յն</b>	3
Արտուր տիկ.	3
Մեղու.	3
Արադաղն ու կտուրը	4
Փիսոն.	4
Շիտիկի օրորը	4
Շունը.	5
Աղվան եկուլ	5
Փիսիկի գանգատը	6
Շիտը և բազեն	7
Լուսաբացին.	7
Առավոտը զյուղում	8
Պոշատ աղվանը	8
Գրիչ.	9
Առաջին ձյունը	9
Պապն ու շաղգամը	10
Բգիսի դպրոցը	11
Պուշ-պույ մուկիկը	12
<b>Հինում է, չի լինում</b>	16
Ճամփորդները	16
Ուլիկ	17
Անհաղթ աքրորդ	18
Ով աշխատի, նա կուտի.	19
Սիւտասանը	20
Երեք արջի հերիաթը	21
Պոշատ աղվանը	23
Շիտը	25
Երկինքը փուլ է գալիս.	26
Հաղարտն բլուլ.	28
<b>Էն ի՞նչն է, ի՞նչը</b>	36
<b>Սուծանի</b>	38

# Աղան բակարդ

Եկի դուկե տրմրպա.	39
Բութամասն ասաց.	39
Ճվիկ-ճվիկ.	39
Ճկութն ասաց.	40
Բնչպե՞ս կուտիս.	40
Ծուլըրու դո՞ւ, աննամեր.	40
Ափ ու պտղունաց.	41
Մուկն ու կատուն.	41
Ճնձուկն ու կատուն.	41
Մկան թակարդ.	42
Թգուկներ և հականեր.	42
Կատուն եկավ.	43
Ճանաչիր դրոշակի.	43
Ծովն ալեկոծվում է.	44
Երկու սառնամանիք.	44
Թոշուններն ու վանդակը.	45
Ուրախ երեխաներ.	45
Ասեղ, թեկ, հանգույց.	46
Հինգ այծատեր.	46
<b>Երգանքան</b>	47
Արեւ, արեւ.	47
Հո՞պ, թոփ.	48
Այբ, բնն, գիմ.	49
Էս առուն.	50
Աղջկեր, պար բռնեցեր.	51
Վիճակի երգ.	52
Դան, դան, դանենդան.	53
Խնկի ծառ.	54
Կթի երգ «Դիլիլո, դիլիլո».	55
Խնոցու երգ.	55
Բոլոճկի երգ.	56
Ճախարակի երգ.	57
Թագիփորի մեր, դուս արի.	58
Աղջիկ, աղջիկ, Հերիքնազ.	59
Զըսիկ, զըսիկ.	60

Օգտագործման է թույլատրված  
ՀՀ «Միսիթար Սերաստացի» կրթահամալիրի  
հոգարարձութերի խորհրդի կողմից

Նկարիչ՝  
Սրբագրիչ՝  
Էջաղող՝  
Տեխ. խմբ.

Գոհար Սանոյան  
Ռուբեն Վարդանյան  
Հասմիկ Բալայան  
Շուրա Հայրյան



Ստորագրված է տպագրության 20.09.94թ.: Պատվիր N53:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Զափառ՝ 60x841/16: Ձուլք՝ օֆսեթ N1:  
Տպաքանակը 5000: Գինը՝ պարմանտըքային:

Տպագրված է ՀՀ «Միսիթար Սերաստացի» կրթահամալիրի «Շաղիկ»  
հրատարակչության տպարանում: Երևան, Հարավ-Արևմտյան Բ-1  
թաղամաս, Բաֆֆու փողոց 4: